

## **ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ՀԱՅԵՐԵՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹԸ\***

**Բանալի բառեր** – լեզվանուն, տարբերակայնություն, պատմական բառագիտություն, բառային կազմի փոփոխություն, կանոնարկում, բառակազմական օրինաչափություն, բառարանագրական ավանդույթ, գաղղիերեն, փռանկերեն, «ֆրանսիարէն», ֆրանսերեն:

### **Մուտք**

Ֆրանսիացիների լեզուն ֆրանսերենն է, որը Ֆրանսիայի պետական լեզուն է, պաշտոնական լեզվի կարգավիճակ ունի Բելգիայում (ֆլամանդերենի հետ), Շվեյցարիայում (գերմաներենի, իտալերենի և ռետոռոմաներենի (ռումանշ, լադիներեն) հետ), Կանադայում (անգլերենի հետ), ինչպես նաև Ֆրանսիայի նախկին և այժմյան տիրույթների շուրջ քսան պետություններում: Ֆրանսերենը Միավորված ազգերի կազմակերպության և միջազգային տարբեր կազմակերպությունների պաշտոնական ու աշխատանքային լեզուներից է: Այն աշխարհի ազդեցիկ լեզուներից մեկն է, որով ստեղծվել են գրական և գիտական գլոխգործոցներ, արտահայտվել ազատատենչ և վեհ գաղափարներ:

Ֆրանսերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի ժամանակյա ճյուղի լեզու է, ծագել է ժողովրդական լատիներենից: Մ. թ. ա. I հազարամյակի վերջին Ֆրանսիայի տարածքը բնակեցրել են կելտերը, որոնց հռոմեացիները կոչել են «գալեր»։ այստեղից էլ՝ երկրի անունը՝ Գալլիա (կամ Գալիա) / Գաղղիա (կամ Գաղիա): Հռոմեական նվա-

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.07.2022:

ձուների շրջանում՝ մ. թ. ա. II-I դարերում, ժողովրդական լատիներենից առաջացած լեզուն տարածվել է Գալլիայում՝ աստիճանաբար դուրս մղելով կելտերենը. ուրույն զարգացումը հանգեցրել է նոր լեզվի ձևավորման<sup>1</sup>: III-IV դարերում գալլերի երկիրը նվաճել են գերմանական ցեղերը՝ վեստգոթեր, բուրգունդներ, ֆրանկներ<sup>2</sup>: VI դ. կեսին Գալլիայի ամբողջ տարածքը մտել է Ֆրանկական պետության մեջ (մինչև IX դ. կեսը), որտեղ ֆրանկները փոքրամասնություն էին: 843 թ. Կարոլինգների (Պիպինների) կայսրության տրոհման հետևանքով առանձնացավ Արևմտաֆրանկական թագավորությունը: Այդ ժամանակից Ֆրանսիան գոյություն ունի որպես ինքնուրույն պետություն, իսկ X դարից երկիրը կոչվեց Ֆրանսիա<sup>3</sup>: XIII դարից սկսած՝ տարածված բարբառներից գերակայություն է ստանում Իլ դը Ֆրանսի՝ ֆրանկյան բարբառը, որն էլ ընկած է ժամանակակից գրական ֆրանսերենի հիմքում:

Ֆրանսիայի պատմության այդ հանգրվանները հատուկ նշվեցին, քանի որ այստեղ հիշատակված բառերի (անունների) հիմքերը հետագայում օգտագործվեցին ֆրանսիացիների լեզվի հայերեն անվանում(ներ)ը կազմելիս: Դրանք են՝ Գալլիա / Գաղղիա, գաղղիացի, ֆրանկներ (լատ. Franci, գերմ. Franken), Ֆրանկական պետություն, Ֆրանսիա, ֆրանսիացիներ (և սրանց տարբերակները):

Ֆրանսերենն ունի զարգացման երեք շրջան՝ հին ֆրանսերեն (IX-XIII դդ., գրավոր հնագույն հուշարձանները IX դարից են), միջին ֆրանսերեն (XIV-XVI դդ.) և նոր ֆրանսերեն (XVI դարից սկսած)<sup>4</sup>:

Հայերը ե՞րբ են առնչվել ֆրանսիացիների հետ, ծանոթացել նրանց լեզվին, ե՞րբ և ինչպե՞ս են անվանել այդ լեզուն, **ֆրանսերեն**–ը ռոմանական այդ լեզվի հայերեն միա՞կ լեզվանունն է, թե՞ ունեցել է

1 Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 12, Եր., 1986, էջ 702:

2 Նոր հայկազյան բառարանն ունի **փռանք** կամ **փռանկ** տարբերակային բառերը՝ «Ազատ: Անուն հին ազգի գերմանացոց ... որք անցեալ Հռենոս գետ կալան գաղղիա, ուստի և գաղղիացիք շամկօրէն կոչեցան ֆռանչէգէ, ֆրանսըգ, ֆրանկսըգ» բացատրությամբ և V դարում (Մովսես Խորենացու) գործածության վկայությամբ (տե՛ս Հ. Գաբրիել Աւետիքեան, Խ. Խաչատուր Սիրովէեան, Խ. Մկրտիչ Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատ. Բ, Վենետիկ, 1837, էջ 962): Ուշ վկայությունների հիման վրա (Մագիստրոս, Շնորհալի, Լամբրոնացի, Մխիթար Գոշ) բառարանում տեղ են գտել նաև **ֆռանգ**, **ֆռանկ** և **ֆրանկ** տարբերակները (էջ 1037), որոնք հղվում են **փռանկ**-ին:

3 Տե՛ս «Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 12, էջ 705, 699: Տե՛ս նաև «Միջին դարերի պատմություն», Ս. Դ. Սկազկինի և այլոց խմբագրությամբ, հատ. 1, Եր., 1975, էջ 154, 173: Հանրագիտարանում **Գալիա** է (մեկ լ-ով), իսկ այլուր, նաև միջին դարերի պատմության համալսարանական նշված ձեռնարկում ավելի շատ հանդիպում է կրկնաբարձայնով **Գալլիա** (անցյալում **Գաղղիա**):

4 Տե՛ս **Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարազոյլյան Թ.**, Լեզվաբանական բառարան, Եր., 1975, էջ 316:

նախօրինակներ, տարբերակներ, ինչպես որ ունեցել են (կամ ունեն) հին և նոր ուրիշ լեզուներ<sup>5</sup>:

Հայերը և ֆրանսիացիներն աշխարհագրորեն հեռու էին իրարից, և հանդիպման քիչ հնարավորություններ են եղել: Հայ-ֆրանսիական հարաբերությունները սկիզբ են առել բուն երկրից դուրս՝ Կիլիկիայում, որտեղ Բագրատունիների թագավորության անկումից հետո՝ XI դարում, ստեղծվել էր հայկական ինքնուրույն պետություն: Երբ խաչակիրները ոտք են դնում Կիլիկյան Հայաստան և մոտիկից ծանոթանում հայերի հետ, ձևավորվում են սերտ հարաբերություններ: Խաչակիրներին հաջորդում են վաճառականները, որոնք գործուն հարաբերությունների մեջ են մտնում հայ վաճառականների հետ: Հայ-ֆրանսիական քաղաքական բարձր շրջանակների միջև հաստատվում են խնամիական կապեր, կնքվում է գինական դաշնակցություն և այլն<sup>6</sup>: XII-XIV դարերը հայ-ֆրանսիական հարաբերությունների բուռն զարգացման շրջանն էր:

Նոր ժամանակներում գորավոր էր ֆրանսերենի ազդեցությունը հատկապես արևմտահայ կրթական, գիտական և մշակութային կյանքի վրա, ֆրանսերենի և ֆրանսիական գրականության ուսուցումը պարտադիր էր ոչ միայն Կ. Պոլսի և Զմյուռնիայի, այլև արևմտահայ բոլոր քաղաքների և գյուղերի դպրոցներում, կրթված մարդը պիտի իմանար ֆրանսերեն կարդալ և քիչ թե շատ խոսել<sup>7</sup>: Ֆրանսիացիների լեզվին հայերը բազմաթիվ անուններ են տվել (բառեր և բառակապակցություններ): Բնենք դրանք:

### ՖՈՒՆԿԵՐԵՆ / ՖՈՒՆԳԵՐԵՆ

Ֆրանսիացիների լեզվի անունը **ֆռանկերեն** ձևով հայերենում գրավոր ավանդվել է միջին հայերենի շրջանից: Գործածվել է միջնադարյան Եվրոպայում տարածված «Պատմութիւն Փարէզի և Վեննայի»

5 Տե՛ս **Գյուրջիյան Ղ.**, Արամեացիների լեզվի հայերեն անունը, «Հայագիտական հանդես», Եր., 2021, N 3, էջ 3-17, Հրեաների լեզվի հայերեն անունները և դրանց տարբերակները, «Հայագիտական հանդես», Եր., 2021, N 4, էջ 3-17, Հնդկական լեզուների անունները հայերենում. Գործածության, կանոնարկման և բառարանային մշակման հարցեր, «Հայ բառարանագրության արդի խնդիրներն ու հեռանկարները», Միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2021, էջ 17-37, Բալթիական լեզուների հայերեն անունների տարբերակայնության մասին, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 2021, N 2, էջ 217-239, Հրեաների լեզվի հայերեն անունների և դրանց տարբերակների բառարանային մշակման պատմությունը, «Բանբեր հայագիտության», Եր., 2021, N 3, էջ 216-231:

6 Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Եր., 1964, էջ 419:

7 Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Եր., 1951, էջ 572:

ասպետական սիրավեպի հայերեն թարգմանություն–փոխադրության մեջ (1587 թ. Մարսել քաղաքում սիրավեպը հայերենացրել է Հովհաննես քահանա Տերզնցին). «Խօսի **Ֆռանկերէն** և ասէ ցիշխան»<sup>8</sup>: Ժամանակագրական առումով **Ֆռանկերէն**–ը ֆրանսիացիների լեզվի հայերեն առաջին անունն է<sup>9</sup>: Այն սիրավեպի ձեռագրերում հանդիպում է **Ֆռէնկերէն** և **Ֆռնկերին** ձևերով:

Գրաբարը **Ֆ** հնչյուն չի ունեցել, **Ֆ** չունեն նաև հայերենի որոշ բարբառներ (Արցախի, Թիֆլիսի և այլն): **Ֆ**–ի մասին Արսեն Բագրատունին գրում է. «Ֆ նորահնար գիր է վասն այլազգական անուանց, յորոյ տեղին նախնիքն վարեին փ. որպէս փրանկ, ֆրանգ, ի մեր ձայնս չիք ուրեք այդ տառ»<sup>10</sup>:

Փոխառյալ բառերում **Ֆ**–ի դիմաց հայերենում գործածվել են **փ** կամ **հ** հնչյունները, ինչպես՝ **փիղակի** կամ **փիլակէ** (հուն. φύλαξι «պահեստ, բանտ»), **փիլիսոփայ** (հուն. φιλόσοφος «իմաստասեր»), **հրասախ** կամ **փարսախ** (չափի միավոր, պարսկերենից)<sup>11</sup>: **Ֆ** հնչյունի գրավոր առաջին վկայություններն արձանագրված են XIII դ. սկզբնաղբյուրներում (բացառված չէ, որ խոսակցական լեզվում այն ավելի վաղ կիրառություն ունենա):

Կիլիկյան մատենագրության մեջ բազմաթիվ են օրինակները, որոնցում օտարլեզվյան **ֆ**–ն հայերենում տառադարձվել է **Ֆ**–ով, սակայն միշտ այդպես չէ: Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» երկի՝ 1279 թ. ընդօրինակությամբ հասած ձեռագրում, օրինակ, օտարլեզվյան **ֆ**–երը հիմնականում տառադարձված են **փ**–ով<sup>12</sup>:

Լեզվանունը վկայվել է նաև **Ֆռանգերէն** տարբերակով. «**Ֆռանգերէն**՝ սերպի, արաբ հայիյէ» (Աբրահամ Կոստանդնուպոլսեցի, «Պատմութիւն անասնոց և գազանաց»)՝<sup>13</sup>: Հայերեն կենդանաբա-

8 «Պատմութիւն Փարզի և Վեննայի: Պատմութիւն Վենետիկ քաղաքին», աշխատասիրությամբ **Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի**, Եր., 1966, էջ 44-45, 56-57, 229: Հմմտ. **Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ.**, Միջին հայերենի բառարան, 2-րդ բարեփոխված հրատ., Եր., 2009, էջ 833:

9 Ռ. Ղազարյանը «Միջին գրական հայերենի բառապաշարը» գրքում (Եր., 2001, էջ 202) թվարկում է **-երէն** (-երէն) ածանցով կազմված միջինհայերենյան բառերը՝ **արապերէն, դահմատերէն** «լատիներեն», **թուրքերէն, յուներէն, հնդկերէն, վրացերէն, տաճկերէն** «արաբերեն», սակայն չի հիշատակում **ֆռանկերէն / ֆռանգերէն** տարբերակները, որոնք գրանցված են իր համահեղինակությամբ կազմված բառարանում:

10 **Հ. Արսեն Կոմիտաս Բագրատունի**, Հայերեն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 4:

11 Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Գրաբարի ձեռնարկ, 4-րդ հրատ., Եր., 1976, էջ 8:

12 Տե՛ս **Մուրադյան Հ.**, Հնչյունաբանություն, «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հատ. Ա, Եր., 1972, էջ 125:

13 **Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 833:

նական այս առաջին աշխատությունը գրվել է 1611 թվականին, ուստի սա ավելի շուտ վաղաշխարհաբարյան իրողություն է, քան միջինա-յերենյան: Խուլ **կ**-ի ձայնեղացումը՝ վերածումը **գ**-ի, բնորոշ է միջին հայերենին, արևմտահայ բարբառներին, այդ թվում՝ պոլսական հայերենին: **Կ/գ** բաղաձայններով դրսևորվող տարբերակայնությունը գալիս է նաև առանձին գործածվող բառահիմքի տարբերակայնությունից՝ **Ֆռանկ / Ֆռանգ / Ֆրանգ / Ֆրանկ**, որ ընկալվում էր «կաթոլիկ ֆրանսիացի կամ իտալացի», եվրոպացի առհասարակ<sup>14</sup>: Ի դեպ, ռանկորեն **Ֆռանգաստան / Ֆռէնկիստան** ասելով էլ հասկացվում էր նախ և առաջ «Եվրոպա»<sup>15</sup>:

Ինչպես տեսանք, գոյություն ունի նաև **Ֆռէնկերէն** տարբերակը: Գործածության նմուշներ XVIII դ. վերջից. «Նա ըստ անուան պապուն իւրոյ կոչի Կոմիտաս, եւ **Ֆռէնկերէն** Կօզմաս» (1771 թ.)<sup>16</sup>, «Ընդ գիրսն եկեալս ի Բասրայէ՝ պիտէր լինել եւ **Ֆռէնկերէն** էֆիմէրիտէս կամ Աստղաբաշխական գիրք ինչ...» (1793 թ.)<sup>17</sup>: Ուշագրավ է այս տարբերակի բացատրությունը «Պատմութիւն Փարէզի և Վեննայի» ասպետական սիրավեպի հրատարակության վերջում զետեղված բառարանում՝ «ֆրանսերեն, Եվրոպայի որևէ լեզու», այդպես էլ «**Ֆռէնկիստան** – 1. Եվրոպա, 2. Ֆրանսիա»<sup>18</sup>:

**Ֆռանկերէն, Ֆռանգերէն, Ֆռէնկերէն** տարբերակները լայն տարածում չեն ունեցել, հետագայում առաջ եկավ դրանց հնչյունական նոր տարբերակը:

Մերօրյա բառարաններից մեկում հանդիպում է **Ֆրանկերեն** բառը՝ «ֆրանկների լեզուն» բացատրությամբ և «francique» թարգմանությամբ, ինչպես նաև **գալլերեն**–ը՝ «գալլերի լեզուն» բացատրությամբ և «gaulois» թարգմանությամբ<sup>19</sup>: Սրանք, անշուշտ, «ֆրանսերեն» չեն նշանակում, թեպետ **Ֆրանկերեն**–ի պարագայում «ֆրանսերեն» իմաստը կարող էր նշվել:

14 Հմմտ. **Գաբամաճեան Ս.**, Նոր բառագիրք հայերեն լեզուի, Կ. Պոլիս, 1910, էջ 1347:  
 15 Տես Հ. **Գաբրիել Անտոբեան, Կ. Խաչատուր Սիրունիեան, Կ. Սկրտիչ Ազգերեան**, նշվ. աշխ., էջ 1037, Հ. **Սանուկ վրդ. Ջախջախեան**, Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական, Վենետիկ, 1837, էջ 1498:  
 16 Հ. **Ղեւոնդ Տայեան**, Մայր դիւան Մխիթարեանց Վենետկոյ ի Ս. Ղազար 1707-1773 ի ծագմանէ ուխտիս մինչեւ ցբաժանումն Թրեստեան հարց, Վենետիկ, 1930, էջ 267:  
 17 Հ. **Սահակ վրդ. Ճեմճեմեան**, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեան ի Վենետիկ, հատ. Դ, Վենետիկ, 1993, էջ ԻԳ:  
 18 «Պատմութիւն Փարէզի և Վեննայի», էջ 301:  
 19 Տես **Բարեգիզյան Ա.**, Հայերեն-ֆրանսերեն բառարան, Եր., 2009, էջ 962, 202: Այս բառարանում **գաղղիական** բառը հղվում է **գալլական**-ին (էջ 203), թեպետ այն ավելի շատ գործածվել է «ֆրանսիական» իմաստով:

## ՓՈՒԱՆԿԵՐԵՆՆ

Միջինհայերենյան այս լեզվանունը փոխանցվեց աշխարհաբարին, մասնավորապես՝ գրական արևմտահայերենին, միայն թե բառասկզբում **Ֆ**-ի փոխարեն **փ** է՝ **փռանկերէն**:

Մխիթարյան միաբան Ղևոնդ Ալիշանի լեզվում տեսնում ենք լեզվանվան **փ**-ով տարբերակը (XIX դ. վերջին քառորդ և XX դ. սկիզբ). «...նոյն ինքն Հեթում արքայ, **փռանկերէն** պայմանագրովն՝ յամի 1252.... խոստանայր»<sup>20</sup>, «...**փռանկերէն** ալ Carpésie, ի յունականնէն Καρπηςιον»<sup>21</sup> (խոսքն **ազազու** բույսի մասին է), «...որոյ պատմական մասին **փռանկերէն** թարգմանութեան՝ խարէ անգլիացի թարգմանիչն...»<sup>22</sup>, «Բայց զի հաւաստչեայքն գրեթէ բոլոր, բաց ի սակաւուց լատիներէն գրուած են, սակաւքն իտալերէն եւ **փռանկերէն**»<sup>23</sup>, «...այսպէս եւ սորա հայերէնս միայն կայ, յորն է եւ **փռանկերէն** փոխարկեց Պրոսէ»<sup>24</sup>, «...մօտ տարիներումն թարգմանուած եւ ծանոթագրուած անգլիարէն, գերմաներէն եւ **փռանկերէն**»<sup>25</sup>: Ինչպէս տեսնում ենք, Ալիշանը գործածել է **կ**-ով տարբերակը, սակայն նախընտրել է բառասկզբի **փ**-ն: Գիտնական հոգևորականը նախապատվությունը տվել է **փ**-ին՝ հավանաբար կարծելով, թե լեզվանունն այդպէս ավելի «հայերենամոտ» և «գրաբարարույր» է:

Արդեն ասել ենք, որ հայերենում ունենք **Ֆռանկ** / **Ֆռանգ** / **Ֆրանգ** / **Ֆրանկ** տարբերակայնություն, այնինչ, ինչպէս տեսնում ենք, **Փռանկերէն**-ը և **փռանկերէն**-ը միայն **ռ**-ով են: Օտար լեզուներից փոխառյալ բառերում բառամիջի և բառավերջի **ր**-ի դիմաց հայերենը հիմնականում դնում է **ր**, ինչպէս՝ ֆրանսերեն frère – **Ֆրեր**, prince – **բրինձ** և այլն, բայց նաև harnais – **հառնէզ**, քանի որ ճնգային **ն**-ից առաջ է<sup>26</sup>: Միջին հայերենում և հայերենի բարբառներում արձանա-

20 Ալիշան Ղ., Միտումն. Համագրութիւն հայկական Կիլիկիոյ. Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885, էջ 382:

21 Ալիշան Ղ., Հայրուսակ կամ հայկական բուսաբանութիւն, Վենետիկ, 1895, էջ 12:

22 Ալիշան Ղ. [թարգմ.], Աբուսահլ Հայ, Պատմութիւն եկեղեցեաց եւ վանորդից Եգիպտոսի, Վենետիկ, 1895, էջ 32:

23 Ալիշան Ղ., Հայ-Վենետ կամ յարընչութիւնք հայոց եւ վենետաց, Վենետիկ, 1896, էջ Ը:

24 Ալիշան Ղ., Հայապատում. Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, հատ. Ա, Վենետիկ, 1901, էջ 255:

25 Ալիշան Ղ., Արշալոյս քրիստոնէութեան Հայոց, Վենետիկ, 1901, էջ 384:

26 Հմմտ. Սուրադյան Հ., Հնչյունաբանություն, էջ 140-141: Հունական փոխառություններում ր-ի դիմաց հայերենն ունի կոչոտ **ռ**, ինչից եզբադրվում է, որ հունարենում այն ավելի թրթռուն արտասանություն ուներ:

գրվում են  $p > n$  փոխանցման դեպքեր, երբ  $p$ -ն արտասանվում է  $n$ <sup>27</sup>: Երևույթն այս կամ այն չափով դրսևորվում է բոլոր այն բարբառներում, որոնցում կա  $p/n$  հակադրությունը: Սակայն պարզ չէ (նաև լեզվանվան քննարկվող տարբերակների դեպքում), թե ի՞նչ պատճառներով է կատարվում այդ փոփոխությունը:

**Ֆռանկերէն / Ֆռանգերէն** և **փռանկերէն** տարբերակները լայն տարածում չգտան և աշխարհաբարի բառարաններում չեն արձանագրվել:

### ՓՈՒՆԿ ԼԵԶՈՒ

XIX դ. երկրորդ կեսին գործածվել է **փռանկերէն** լեզվանվան համարժեք **փռանկ լեզու** բառակապակցությունը. «լեզու» նշանակող **-երէն** ածանցի փոխարեն կիրառվել է **լեզու** բառույթը: Օրինակ՝ XIX դ. երկրորդ կեսից. «...գերկորդն Հատած թարգմանել ի **փռանկ լեզու** և հրատարակել տպագրութեամբ ի Բարիզ»<sup>28</sup>:

Սրա ուղղագրական տարբերակները՝ **Ֆռանգ լեզու**, **Ֆրանգ լեզու**, **Ֆրանկ լեզու**, գործածվել են «Պատմութիւն Փարէզի և Վեննայի» սիրավեպի հայերեն ձեռագրերում<sup>29</sup>, ընդ որում, «թարգմանեալ է ի **Ֆռանկ լեզու**է ի հայի» արտահայտության **ի Ֆռանկ լեզու**է-ն միանշանակ «Ֆրանսերեն» չի ըմբռնվում, այլ մեկնաբանվում է նաև որպես «լատիներեն», քանի որ միջնադարյան հայ հասարակության մեջ «լատին» և «ֆռանկ» հասկացությունները գրեթե համընկնում էին<sup>30</sup>:

Լեզվանվան այս տարբերակը «ազգի անուն+լեզու» կառույցի իրացումն է, որ սովորական է հայերեն լեզվանուններում: **Փռանկ լեզու** կառույցին համահունչ նախօրինակներ կան գրաբարում: Հմնտ. «...պէտ արարեալ զամենայն ազգաց զմատեանս և զվէպս ի **յոյն լեզու** փոխարկեաց», «...ետ թարգմանել երանելի վարդապետն մեր Մաշտոց ի **հայ լեզու**», «...փոխեաց զամենայն ի **լեզու ասորի**»<sup>31</sup>:

27 Տե՛ս **Սուրադյան Հ.**, Հայոց լեզվի պատմական քերականություն, հատ. 1. Հնչյունաբանություն, Եր., 1982, էջ 220-221:

28 **Կիրակոսի վարդապետի Պանծակեցոյ** Համառօտ պատմութիւն ի սրբոյն Գրիգորէ ցաւորս իւր լուսաբանեալ, Վենետիկ, 1865, էջ 2 («Յառաջաբան»):

29 Տե՛ս «Պատմութիւն Փարէզի և Վեննայի», էջ 87-88:

30 Տե՛ս նոյն տեղում, էջ 42-43:

31 Տե՛ս **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և ներածութիւնը՝ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Եր., 1991, էջ 8, 120, 201:

Գործածության նմուշներ կան Ղևոնդ Ալիշանի «Միսուան» աշխատության մեջ: Այսպես՝ «Պատմութեանն Արեւելից գտանին բազում օրինակք ձեռագիրք, յորս հռչակեալ է գրեալն ի **փռանկ լեզու**» և «Գտանին եւ այլ զուգաժամանակ տպագրութիւնք ի **փռանկ լեզու**՝ սակաւ ինչ զանազանեալ շարաբանութեամբքն. նոյնպէս եւ անգղիարէն տպագրեալ ի միջոցի 1520–30 ամաց»<sup>32</sup>: Ալիշանի լեզվում այս տարբերակը գործառու է ածանցավոր կազմության՝ **փռանկերէն**-ի հետ զուգահեռաբար: Նշենք, որ հայերենի զարգացման գրաբարյան փուլում լեզվանուն կազմելու առաջին քայլը սովորաբար նկարագրական եղանակով հասկացությունն արտահայտելն էր (բառակապակցություն), հետո կազմվում էր ածանցավոր բառը:

**Փռանկ լեզու** տարբերակը դուրս չեկավ Մխիթարյան միաբանների աշխատությունների սահմաններից:

#### ՓՈՒԱՆԿԱՅ ԼԵԶՈՒ

Լեզվանուն կազմելու միջոցներից մեկն էլ «ազգ նշանակող բառի հոգնակի սեռական հոլովաձև+լեզու» մասնակաղապարն է, որը տարածված էր V դ. հայերենում: Հմնտ. «Քանզի **յեբրայեցոց և յԱսորոց լեզու**է խոտորեալ թարգմանի»<sup>33</sup>, «...եղ ի մտի հնարել գտանել նշանագիրս **Հայոց լեզուիս**»<sup>34</sup> և «Պերոզ անուանեցաւ, որ և յաղթող, քանզի յառաջ անուանէր Վաղեղեսոս ի **յունաց լեզուն**»<sup>35</sup>: Նշված լեզվանունների հետևողությամբ XIX դ. երկրորդ կեսին գործածվել է **փռանկաց լեզու** «փռանկների՝ ֆրանսիացիների լեզու» բաղադրյալ անվանումը: Օրինակ՝ «Ռուբենեանք ալ **Փռանկաց լեզուն** և արքունիքը օրինակ առին իրենց»<sup>36</sup>: Ուշագրավ է, որ նախադասության հաջորդ հատվածում, թերևս կրկնությունից խուսափելու նպատակով, երկու անգամ գործածվում է **փռանկերէն** տարբերակը. «...գրեթէ ամենայն պաշտօններու և Սոյ թագաւորին պաշտօնէից պատուանունքն **փռանկերէն** էին. օտար տէրութեանց հետ ըրած բոլոր դաշնադրու-

32 Ալիշան Ղ., Միսուան. Համագրութիւն հայկական Կիլիկիոյ. Լեւոն Մեծագործ, էջ 339, 341:

33 Եզնիկ Կողբացի. Եղծ աղանդոց, Եր., 1994, էջ 44:

34 Սովակս Խորենացի, նշվ. աշխ., էջ 317:

35 Նոյն տեղում, էջ 197:

36 «Ղարուբին հայոց ի յիշատակի դարադարծի ծննդեան Սամուելի Մուրատայ և ի քսաներորդի վեցերորդի տարեկան հանդիսի վարժարանին նորա», «Քազմավէպ», Վենետիկ, 1861, N 1, էջ 13:



թիւններն կամ **փռանկերէն** և կամ **լատիներէն** գրուած էին»<sup>37</sup>: Սա նշանակում է, որ տվյալ ժամանակահատվածում երկու ձևն էլ գործածական էին, ինչպես որ վերը հիշատակված **յունաց լեզու**, **հայոց լեզու** լեզվանուններն ունեն իրենց բառային համարժեքները՝ **յունարէն**, **հայերէն** և այլն: Այդպես էլ՝ **վրաց լեզու – վրացերեն**, **պարսից լեզու – պարսկերեն**:

Լեզվանվան այս տարբերակը հանդիպում է նաև շրջուն շարահատությամբ. «...որոյ բնագիր հայ տակաւին ոչ է յայտնեալ, եւ կարծի գոլ յԷջմիածին, է թելադրեալն ի նմանէ ի **լեզու Փռանկաց**»<sup>38</sup>: Նույն սկզբունքով է կազմվել նաև XIX դ. սկզբից (1803 թ.) վկայված **անգղիացոց լեզու** բաղադրյալ անվանումը<sup>39</sup>:

### ՓՈՒԱՆԿԱԿԱՆ ԼԵԶՈՒ

**Փռանկերէն** լեզվանվանը և դրան հոմանիշ **փռանկաց լեզու** բաղադրյալ անվանը համարժեք է **փռանկական լեզու** բառակապակցությունը. «...ի փակագծի կարգեցաք գյորջորջումն նոցին ի **փռանկական լեզու**»<sup>40</sup>: V դարից ունենք վկայություններ, որոնք «երկրանուն / ժողովրդանուն հիմքից կազմված ածական+**լեզու**» կառույցի իրացումներ են: Օրինակներ Մովսես Խորենացուց. **հայկական լեզու** (=հայերեն) – «Հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել զխօսս և **զլեզուս հայկական**», **պարսկական լեզու** (= պարսկերեն) – «ապարանս հովանաւորս շինեալ, որ ըստ **պարսկական լեզուին** կոչի Դուին»<sup>41</sup>:

XX դարում և այժմ այս կառույցով լեզուներ չեն անվանում, լեզուների հայերեն գիտական անվանացանկում նման միավորներ չկան: Ավելին՝ այդպիսիք անհանձնարարելի են:

### ՓՈՒԱՆԿ ԲԱՐԲԱՌ

XIX դ. երկրորդ կեսին գործածվել է **փռանկ լեզու** բառակապակցությանը համարժեք **փռանկ բարբառ** տարբերակային լեզվանու-

37 Նույն տեղում:

38 Ալիշան Ղ., Սիսուան. Համագրութիւն հայկական Կիլիկիոյ. Լեւոն Մեծագործ, էջ 338:

39 Տես Գյուրջիյան Ղ., Անգլերեն լեզվանվան պատմական զարգացումը հայերենում, «Պատմաբանասիրական հանդես», Եր., 2022, N 2, էջ 169-187:

40 «Քաղաքական աշխարհագրութիւն», հաւաքեաց Ի. Ղեւոնդ Սարգ. Ալիշանեան, Վենետիկ, 1853, էջ Ը:

41 Մովսէս Խորենացի, նշվ. աշխ., էջ 46, 265:

նը. «...յօժարեցաք իսկ յեղով զսա և ի **փռանկ բարբառ**»<sup>42</sup>, «...բազում և պէսպէս գրուածովք յաւէտ ի **փռանկ բարբառ**»<sup>43</sup>: Հազվադէպ է:

## ՓՈՒԱՆԿ

Խոսքաշարում «ժողովուրդ» նշանակող **փռանկ** բառը կարող է գործածվել նաև տվյալ ժողովրդի լեզվի իմաստով՝ «փռանկերեն»: Սա շատ հին մտածողության դրսևորում է, երբ ազգը և լեզուն նույնականացվում էին:

Գիտարկենք Ղևոնդ Ալիշանի հետևյալ նախադասությունները՝ «Խորագիրքն **փռանկ** եւ լատին՝ են ըստ տպագրութեանց 1529 ամի»<sup>44</sup> և «...եւ եկեղեցեակ մի կիսաւեր նկարէն որմովք. յորոյ յատակին նշմարեաց նա դամբանս խորտակեալս թերի **փռանկ** արձանագրութեամբք»<sup>45</sup>: Խոսքաշարից ակներև է, որ **փռանկ**-ը նշանակում է «փռանկերեն», **լատին**-ը՝ «լատիներեն»: Իսկ հետևյալ դեպքում նախապես գործածված **լեզու** բառը հնարավորություն է տվել չկրկնելու այն կամ չգործածելու ածանցավոր լեզվանունը. «Իբրեւ դար մը վերջը (1780) ի Լոնտրա տպագրած է Հաւատովն չորս լեզուով, հայ, լատին, **փռանկ** եւ անգղիարէն»<sup>46</sup>: Նման գործածություններն են նպաստել, որ անածանց միավորներն ընկալվեն լեզվանվան արժեքով:

## ԳԱՂՂԻԱԿԱՆ / ԳԱԼԼԻԱԿԱՆ ԲԱՐԲԱՌ

Ներկայիս Ֆրանսիայի և Բելգիայի տարածքները բնակեցրած կելտերին հռոմեացիները, ինչպես ասացինք, կոչել են գալլեր (Gallus), իսկ երկիրը՝ Գալլիա (Gallia)<sup>47</sup>: **Գալլ** հիմքից կազմվել են հայերեն **գալլական** «գալլերին հատուկ», **գալլերեն** «գալլերի լեզուն» (գոյական), «գալլերի լեզվով» (ածական/մակբայ) բառերը<sup>48</sup>:

42 «Լաբուրենայ դիւանագիր դարի Եդեսիոյ Թուղթ Աբգարու, յեղեպ յատուոյն ի ծեռն ս. Թարգմանչաց», Վենետիկ, 1868, էջ ԺԵ:

43 Ալիշան Ղ., Սիսուան. Համագրութիւն հայկական Կիլիկիոյ. Լեւոն Մեծագործ, էջ 117:

44 Նույն տեղում, էջ 229:

45 Նույն տեղում, էջ 338:

46 Ալիշան Ղ., Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 250:

47 Տե՛ս Дворецкий И., Латинско-русский словарь, М., 1976, էջ 450: Ի դեպ, լատիներեն համանուն «gallus»-ը նշանակում է «աքաղաղ», ինչի պատճառով գալլ(ի)ական աքաղաղը Ֆրանսիայի ոչ պաշտոնական ազգային խորհրդանիշն է:

48 Տե՛ս Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 214-215:

Միջին հայերենի շրջանում կազմված **գալլիացի** բառը նշանակում է «ֆրանսիացի», օրինակ՝ «**Գալլիացիքն**, որ են ֆրանցեզքն, նաւուք ի Հռոմ եկին առ ասին ծովուն» (Մարտինոս Լեհացի, Գիրք գաւազանաց. Մաշտոցի անվ. Մատենադարանի հ. 3079 ձեռագիր, 13)<sup>49</sup>: Սրա **գաղղիացի** տարբերակն ավելի տարածված է: Հայերենի **լ/ղ** լծորդ հնչյուններին հայերենագիտության մեջ շատ են անդրադարձել, մասնավորապես՝ հայր Արսեն Բագրատունին իր՝ հայերենի քերականության հայտնի գրքին կցված «Յաղագս հնչման **լ** եւ **ղ** տառից մերոց» ծավալուն հոդվածում: Ըստ Բագրատունու՝ հայերենն ունի երկու **լ՝** «թանձր», որ գրվում է **լ**, և «նուրբ կամ լերկ», որ գրվում է «ղ՛իւն» (**լ՝** կամ **ղ՛**). «Այսպէս պիտի գրել և կարդալ յամենայն հրեայ, յոյն և լատին անուանս, որ ունին ոչ թանձր լիւն և ոչ դատ. Ասայել՛, Իսրայել՛, Բեթլ՛եհէմ կամ Բեթղ՛եհէմ .... Իտաղ՛իա կամ Իտալ՛իա, **Գաղ՛ղիա** կամ **Գալ՛լիա**»<sup>50</sup>:

Իսկ աշխարհաբարի շրջանում՝ XIX դ. 20-ականներին գործածված **գալլիական բարբառ**-ը ֆրանսերենն է. «Արդ՝ գաղղիաբանութիւն իմանամք զյատուկ ոճ և զսեփականութիւնս **գաղղիական բարբառոյ**»<sup>51</sup>, «...որով բովանդակի **գաղղիական բարբառ** ըստ կանխաւ նշանակելոյս»<sup>52</sup>:

Նույն դարի վերջին քառորդում էլ տակավին գործածվում էր: Այսպես՝ «Ո՛րչափ արդարև շահս չգործեաց մեզ **գալլիականն բարբառ**, որ այսչափ ամք են՝ զի փութով և ջանիւ ուսեալ է ի հայ ազգէն»<sup>53</sup>: Մխիթարյան միաբանության վարդապետը գրաբար գրված առաջաբանում մինչ այդ գործածել է **բարբառ** բաղադրիչով բաղադրյալ ուրիշ անվանումներ՝ «**Յոյն, Ատրի և Լատին բարբառքն...**», նաև՝ «ասպարէզ բացեալ են **հայ բարբառոյս**», հետո՝ «Մմին բաղղի հանդիպեալ է կամ հանդիպեսցի տակաւ և **անգլիականն բարբառ**», «...սիրելի և ցանկալի յարդարել **զհայկականս բարբառ**»<sup>54</sup>: Վերջիններս կառուցվածքով նման են **գալլիական բարբառ**-ին: Հստակ է, որ նույն խոսքաշարում **լեզու** բառին զուգահեռ բառարանագրի գործա-

49 Դազարյան Ռ., Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 131: Է. Աղայանի բացատրական բառարանում այս բառը հղվում է **գալլեր**-ին (էջ 215):

50 Հ. Արսեն Կոմիտաս Բագրատունի, նշվ. աշխ., էջ 4 և ը:

51 Հ. Արսեն վրդ. Անթիմոսեան, Քերականութիւն գաղղիական, Վենետիկ, 1821, էջ 66:

52 Նույն տեղում, էջ 487:

53 Հ. Մատթաթիա վրդ. Պետրոսեան, Նոր բառգիրք հայ-անգլիարէն, Վենետիկ, 1875-79, էջ V:

54 Նույն տեղում, էջ V-VI:

ծած **բարբառ**-ը գրաբարյան իմաստով «լեզու»-ն է, և խոսքը վերաբերում է հունարենին, ասորերենին, լատիներենին, հայերենին և անգլերենին:

**Գալլիական բարբառ** և **գաղղիական բարբառ** տարբերակային անվանումները բնորոշ են գրավոր խոսքին, տարածված չեն եղել, այժմ հնացած են:

## ԳԱՂՂԻԱԿԱՆ ԼԵԶՈՒ

**Գաղղիական լեզու** բաղադրյալ անվանումը «ժողովրդանուն / երկրանուն հիմքից կազմված ածական+լեզու» կաղապարի իրացումն է: 1816 թ. լույս է տեսնում Մխիթարյան միաբան Աստվածատուր վարդապետ Բաբելյանցի «Համառօտ քերականութիւն գաղղիական լեզուի» գիրքը. այստեղ լեզվանվան տարբերակը վերնագրում է և բազմիցս գործածված է նաև շարադրանքում, ինչպես՝ «Գիրք կամ Տառք **գաղղիական լեզուի** են քսան և հինգ»<sup>55</sup>: Նույն շրջանից (1821 թ.) գործածության ևս մեկ նմուշ. «Քանզի **գաղղիական լեզու** .... հրաւիրէ զուսումնասէրսն իւր ի կատարեալն հնտութիւն»<sup>56</sup>, մեկն էլ՝ արևելահայերեն XIX դ. վերջին քառորդից. «Մեր օրիորդական դպրոցներում սովորեցնում են կրօն, Հ. և Ռ. լեզուներ, մեր և օտարաց աշխարհագրութիւններ, թուաբան, բնագիտ. Հ. և Ռ. պատմութիւններ, **գաղղիական լեզու**, երգ .... ևն»<sup>57</sup>:

Լեզվանվան այս տարբերակը համեմատելի է նույն շրջանում վկայված **անգղիական լեզու** անվանման հետ: Սրանց նախօրինակները կան V դ. հայերենում. «Հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել զխօսս և **զլեզուս հայկական**» և «Ապարանս հովանաւորս շինեալ, որ ըստ **պարսկական լեզուին** կոչի Դուին»<sup>58</sup>:

**Գաղղիական** ածականը արդի հայերենի բացատրական բառարանում ներկայացված է երկու իմաստով՝ «1. գալլական, 2. ֆրանսիական», նույն կերպ էլ **գաղղիացիներ**-ը՝ «1. գալլեր, 2. ֆրանսիացիներ»<sup>59</sup>: **Գաղղիական լեզու** անվանման մեջ դրսևորվել է բառի

55 Աստուածատուր վրդ. Բաբելյանց, Համառօտ քերականութիւն գաղղիական լեզուի. արևոդեալ ի հայ բարբառ հանդերձ տաճկական թարգմանութեամբ, Վիեննա, 1816, էջ 1:

56 Հ. Արսէն վրդ. Անթիմոսեան, նշվ. աշխ., էջ IV:

57 «Նամակ Երևանից», «Պսակ», Եր., 17.07.1882, էջ 2:

58 Մովսէս Խորենացի, նշվ. աշխ., էջ 46, 265:

59 Տես Աղայան Է., նշվ. աշխ., էջ 215:

երկրորդ իմաստը, և կապակցությունը նշանակում է «ֆրանսերեն», ոչ երբեք՝ «գալլերեն», ինչպես որ **գաղղիացիներ**-ը հայերեն խոսքում գործածվում է միայն «ֆրանսիացիներ» իմաստով:

ԳԱՂՂԻԱՑԻ ԼԵՋՈՒ

Հայերեն առաջին պարբերականում հանդիպում է **գաղղիացի լեզու** տարբերակը. «Եւ շրջեալ ի մեր հայկական բարբառ ի նոյն **Գաղղիացի լեզուէ...**»<sup>60</sup>: Սա աշխարհաբարի այն շրջանն է, երբ բազմաթիվ նոր իրողություններ չէին կայունացել լեզվում, շատ բան անմշակ էր, չկանոնակարգված: Հանդիպում է նաև հետագայում. «...յուսումնականս անուանի է ձինետայ օրագիրն որ ամսոյ ամսոյ հրատարակի ի **գաղղիացի լեզու**. 157 յօրագրացս՝ գերմաներէն են, 47 **գաղղիերէն**, 5 իտալերէն...»<sup>61</sup>: Բայց այստեղ ավելի շատ կրկնությունից խուսափելու միջոց է, քանի որ նույն նախադասության մեջ կա այդ շրջանում արդեն կայունացած **գաղղիերէն** լեզվանունը:

Լեզվանվան նշանակությամբ հազվադեպ է:

ԳԱՂՂԻԱՑԻ ԲԱՐԲԱՆ

**Լեզու** և **բարբառ** բառերի հոմանշության վրա հենվելով՝ **գաղղիացի** բառի հարադրությամբ կազմվել է նաև **գաղղիացի բարբառ** բաղադրյալ անվանումը: Այսպես՝ «Ալէն Շարդիէ (1386-1458) արար բանաստեղծութիւն ի լատին և ի **գաղղիացի բարբառ**»<sup>62</sup>:

Հազվադեպ գործածվել է XIX դ. կեսերին: Արևելահայերենում չի հանդիպում:

ԳԱՂՂԻԱՐԵՆ / ԳԱԼԼԻԱՐԵՆ

Բառակապակցությամբ արտահայտված տարբերակային լեզվանունների կողքին նույն ժամանակաշրջանում գործածվել են նաև բառային ձևավորում ունեցող լեզվանուններ: Քերականության դասագրքերից մեկում XIX դ. առաջին տասնամյակներին գործածվել է **գաղղիարէն** տարբերակային լեզվանունը. «...**գաղղիարէն** քերակա-

60 «Համառօտ պատմութիւն մեղուաց», «Ազդարար», Մաղրաս, 1796, N 17, էջ 52:

61 «Քաղաքական աշխարհագրութիւն», էջ 195:

62 Նույն տեղում, էջ 159:

նութիւնսն ի ձեռս առնուլ»<sup>63</sup>: Կազմվել է **գաղղ**- հիմքից և քիչ գործածվող **-արէն** ածանցից: Նույն դարի երկրորդ կեսին այն տեսնում ենք քերականության մեկ այլ գրքի վերնագրում՝ «Քերականութիւն **գաղղիարէն** լեզուի հայերէն բացատրութեամբ», և քանիցս գրքի առաջաբանում, ինչպես՝ «Այս քերականութիւնը հրատարակած ատենիս հարկ չենք համարիր **Գաղղիարէն լեզուին** վրայ երկար ներբողներ հիւսելու», «Իւրաքանչիւր կանոնին վրայ **Գաղղիարէն** օրինակներ և անոնց հայերէնը»<sup>64</sup>: Ինչպես տեսնում ենք, **լեզու** բառը հարադրվել է լեզվանվանը, և ածանցավոր լեզվանունը կարող է նաև առանձնաբար գործածվել: Հետաքրքրական է, որ գրքում հանդիպում է նաև **-երէն** ածանցով կազմված տարբերակը՝ **գաղղիերէն**, օրինակ՝ «**Գաղղիերէն** բայերն ալ մեր բայերուն պէս չորս լծորդութեանց վրայ կը խոնարհին»<sup>65</sup>: Սա նշանակում է, որ այդ շրջանում վերջածանցներով ձևավորված տարբերակայնություն է եղել:

Հմնտ. V դարից վկայված **յունարէն**, **հռոմարէն** «լատիներեն» և XIX դ. սկզբներին գործածված **անգղիարէն** լեզվանունները:

1861 թ. Փարիզում լույս է տեսել Ամբրոսիոս Գալֆայանի «Բառգիրք հայ-**գաղղիարէն** և **գաղղիարէն**-հայերէն» բառարանը, որում **գաղղիարէն**-ը նաև գլխաբառ է դարձել (ի թիվս **գաղղիարան, գաղղիարանեմ, գաղղիարանութիւն, գաղղիախօս, գաղղիական, գաղղիամոլ, գաղղիամոլութիւն, գաղղիանամ, գաղղիացի, գաղղիացուցանեմ** բառերի)<sup>66</sup>:

Նույն կառուցվածքն ունի **գալլիարէն** տարբերակը, միայն թե կրկնակ **ղ**-երի փոխարեն կրկնակ **լ** է. «...ռամիկ մարդիկն չթողուն ի ձեռանէ զքերականութիւնս **գալլիարէն** լեզուի»<sup>67</sup>:

Երկու տարբերակներն էլ Մխիթարյան միաբանության մտավորական միջավայրի ծնունդ են: Լայն տարածում չեն ունեցել: Ուշագրավ է, որ հ. Արսեն վրդ. Անթիմոսյանի (Արսեն Բագրատունի) քերականության մեջ գործածվել են թե՛ **գաղղիական բարբառ** և թե՛ **գաղղիարէն** տարբերակները (կրկնակ **ղ**-ով), Հ. Մատաթիա վրդ. Պետ-

63 Հ. Արսեն վրդ. Անթիմոսեան, նշվ. աշխ., էջ V:

64 Մուրատեան Ե., Քերականութիւն գաղղիարէն լեզուի հայերէն բացատրութեամբ, Երուսաղէմ, 1869, «Յարաջաբան» (անթվակիր էջ):

65 Նույն տեղում, էջ 20:

66 Տե՛ս Գալֆայան Ա., Բառգիրք հայ-գաղղիարէն և գաղղիարէն-հայերէն, Փարիզ, 1861, էջ 172-173:

67 Հ. Մատաթիա վրդ. Պետրոսեան, նշվ. աշխ., էջ V:

րոսյաի բառարանի առաջաբանում՝ **գալլիական բարբառ** և **գալլիա-րէն** տարբերակները (կրկնակ Լ-ով):

**Գալլիարէն**-ը ևս բառարանային գրանցում ունի, արձանագրվել է հայերեն-տաճկերեն-ֆրանսերեն բառարանում<sup>68</sup>: Մեկ տարվա տարբերությամբ Փարիզում լույս տեսած բառարաններում, ինչպես տեսանք, գործածվել են տարբերակներ, որոնք իրարից տարբերվում են **ղ** և **լ** լծորդ կրկնաբաղաձայնների հակադրությամբ:

ԳԱՂՂԻԵՐԵՆ / ԳԱԼԼԻԵՐԵՆ

Ֆրանսերենը հայերեն անվանել են նաև **գաղղ**- հիմքից լեզվանուններ կերտող **-երէն** ածանցով կազմված **գաղղիերեն** բառով:

Բառարաններից մեկը 1879 թվականն է նշում որպես բառի ամենավաղ գործածության նկատված օրինակ՝ բերելով դերասան Պ. Ադամյանի նամակներից հետևյալ նախադասությունը. «Վերջերս հինգ խաղի մեջ գաղղիացվոց հետ՝ **գաղղիերեն** լեզվով կատարեցի երկու premier»<sup>69</sup>: Այս թվականը վստահաբար հետ պիտի տեղաշարժել: Հմնտ. «Բացին գիշերօթիկ դպրոցս ի Պերա եւ ի Պէպէք գիւղ յուսումն **Գաղղիերէն** եւ Անգլիերէն լեզուաց» (1871 թ.)<sup>70</sup>, «Ընթերցարանը մեկ ու կես տարվա ընթացքում ունեցավ 700 հատոր հայերեն, **գաղղիերեն**, ռուսերեն, հունարեն, անգլիերեն, պարսկերեն, և այլ գրքեր» (1876 թ.)<sup>71</sup>:

Կրկնակ **ղ**-երով տարբերակը ներառվել է արևմտահայերենի բացատրական բառարաններ<sup>72</sup>: Դրանցում բառը բացատրվում է միայն որպես «ֆրանսերէն» (բեյրության երկհատորյակում՝ երեք՝ ածականի, գոյականի և մակբայի արժեքներով, իսկ Կոստանյան վարդապետի բառարանում՝ միայն ածականի): Ակադեմիական բացատրական բառարանում լեզվանունը չկա, իսկ Է. Ադայանը **գաղղիերեն** բա-

68 Տես Արամեան Ե., Համառօտագոյն բառարան արդեան հայերէն ի տաճ. եւ ի ֆրանս., Փարիզ, 1860, էջ 8:

69 Նավոյան Ռ., Ակնարկներ 19-րդ դարի 50-80-ական թթ. աշխարհաբարոյան նորակազմութիւններին ուսումնասիրութեան: Բառարան, Եր., 2011, էջ 57: Բառարանում նույն թվականն է նշվում **գաղղիացի** «ֆրանսիացի» բառի համար, իսկ **գաղղիացես** «ֆրանսերենին տիրապետող, ֆրանսերենի գիտակ» բառի համար՝ 1883-ը: Այս տվյալները ճշտման կարիք ունեն:

70 Պերպերյան Ա., Պատմություն հայոց, Բ հրատ., Ս. Էջմիածին, 2008, էջ 288 (առաջին հրատարակությունը Կ. Պոլիս, 1871, զլ. ԾԲ, ԾԷ):

71 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 10, Եր., 1991, էջ 382:

72 Տես Գնէլ արք. Զերէնեան, Փ. Կ. Տօնիկեան, Հայոց լեզուի նոր բառարան, հատ. 1, Պէյրութ, 1992, էջ 370, Անդրանիկ վրդ. Կռանեան, Բառգիրք հայերէն լեզուի, Պէյրութ, 1998, էջ 70:

ցատրում է որպես «1. գալլերեն, 2. ֆրանսերեն»<sup>73</sup>: **Գաղղիերեն**–ը հայերենում «գալլերեն» իմաստով չի գործածվել. հայերեն բառը կազմվել է «Ֆրանսիա» նշանակող **Գաղղիա** հատուկ անունից և դրանից առաջացած **գաղղիացի** «ֆրանսիացի» բառից:

Այս տարբերակը արևելահայ իրականության մեջ բառարանային գրանցում է ստացել XIX դ. վերջերից: Ուշագրավ է Կ. Յաղուբյանի մոտեցումը: Հայերեն–ռուսերեն բառարանում գրեթե նույնական՝ «французский (язык)» թարգմանությամբ ընդգրկվել են թե՛ **գաղղիերեն**–ը և թե՛ **ֆրանսերեն**–ը, առաջինը՝ ածականի և մակբայի, երկրորդը՝ ածականի, գոյականի և մակբայի արժեքներով<sup>74</sup>:

Կրկնակ բաղաձայն ունենալու հիմքով **գաղղիական**–ը և **գաղղիերեն**–ը *հնց.* (հնացած) նշումով ներառվել են նաև ուղղագրական բառարանի բառացանկ<sup>75</sup>:

**Գալլիերեն**–ը ևս բառարանային գրանցում ունի, սակայն հղվում է **գաղղիերեն**–ին<sup>76</sup>, այսինքն՝ նախապատվությունը վերջինին է տրվել: Այդ են վկայում նաև գործածության փաստերը. **գաղղիերեն**–ի հետ համեմատած՝ **գալլիերեն**–ը հաճախադեպ չէ:

Արևմտահայերեն և արևելահայերեն տպագիր խոսքում **գաղղիերեն**–ը հանդիպում է նաև մեկ **դ**–ով: Օրինակներ՝ «Դպրոցական ասպարեզեն առևտրական ասպարեզը ցատկեց Մկրտիչ էֆենտի, և մեկ կողմէ **գաղղիերեն**, անգղիերեն և տոմարակալություն ուսնելով, մյուս կողմէ ստակ շահելու հետամտեցավ»<sup>77</sup>, «Նա կարձ միջոցում սովորեց ոչ միայն հայոց հին ու նոր լեզուները, այլ բավականաչափ **գաղղիերեն** և անգղիերեն»<sup>78</sup>: Նկատենք, որ գրության այդ տարբերակը չի տարածվել և երբևէ կանոնական չի համարվել:

73 Տես **Աղայան Է.**, նշվ. աշխ., էջ 215:

74 Տես **Եղորտեան Կ.**, Հայերեն–ռուսերեն բառարան, Թիֆլիս, 1891, էջ 70, 455:

75 Տես **Բարսեղյան Հ.**, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Եր., 1973, 207 էջ:

76 Տես [**Հ. Գեորգ Պայեան**], Բառարան հայերեն–գաղղիերեն, հատ. Ա, Վենետիկ, 1926, էջ 532: **Գալլիերեն**–ի անկայուն վիճակի վկայությունն է նաև այն, որ բառարանում հայտնվել է **դ**–երի շարքում **գաղձ**–ից հետո, **գաղղիաբան**–ից առաջ:

77 **Պարոնյան Հ.**, Ազգային ջոջեր, Երկերի ժողովածու, հատ. 2, Եր., 1964, էջ 239:

78 **Ռաֆֆի**, Սալբի, Երկերի ժողովածու, հատ. 2, Եր., 1983, էջ 84: Ռաֆֆու վաղ շրջանի գործերից է, բայց հրատարակվել է 1911 թ.:



**Ֆրանսերեն** լեզվանվան տարբերակներից է **ֆրանցուզերեն**-ը: Կազմվել է ռուս. **французский язык** անվանման առաջին բաղադրիչի **француз** հիմքից հայերենի՝ «լեզու» նշանակող **-երեն** ածանցով: Օրինակ՝ «Թէկուզ Ռսերէն, Նէմեցերէն, եա **Ֆրանցուզերէն** գրած, թէկուզ գրաբառ՝ տասը կըլի, որ հասկանային»<sup>79</sup>, «Ինչ կուզէ **Ֆրանցուզերէն**, Նեմեցերէն գիտենանք, մենք չենք կարող էնպէս բան գրիլ, որ նրանց միջումն անուն ունենայ»<sup>80</sup>:

Հանդիպում է նաև **n-ով՝ ֆռանցուզերէն**, անգամ միևնույն հրատարակության մեջ: Այսպես՝ «Կրթիլ են ասում, թուղթ խաղալ, **ֆռանցուզերէն** խօսիլ, անգիր բերան անիլ, գլխիցը դուս տալ՝ չեն ասում»<sup>81</sup>: Խ. Աբովյանի վեպի «Հառաջաբանի» հայտնի օրինակն ամենայն հայոց բանաստեղծի մեջբերման մեջ ևս **n-ով է (ֆռանցուզերէն գրած)**<sup>82</sup>: Բառում **ր/n-ի** տարբերակայնությունը նոր երևույթ չէ. հմնտ. միջինհայերենյան թեկուզ **ֆռանգ / ֆրանգ, ֆռանկ / ֆրանկ** տարբերակները:

**Ֆրանցուզերեն / ֆռանցուզերէն** տարբերակների գործածության ժամանակը XIX դ. առաջին կեսն է, որը գրական արևելահայերենի ձևավորման շրջանն էր: **Ֆրանցուզերեն**-ը նշված ժամանակի ժողովրդախոսակցական լեզվի միավոր է, գիտական խոսքում երբևէ չի գործածվել:

Թիֆլիսի բարբառում, որը **ֆ** հնչյուն չունի, այս լեզվանունը բնականորեն դարձել է **փրանցուզերեն**: Այստեղից էլ թափանցել է գրականության լեզու. «Սոֆին ձեզ երկուսիդ էլ կպատրաստե, և հետո կտամ ձեզ պանսիոն: Սոֆիի նման լավ ռուսերեն և **փրանցուզերեն** կտորվիք»<sup>83</sup>:

Լեզվանվան այս տարբերակը, որ գործածել են հայ նոր գրականության հիմնադիրը և մեծանուն պատմավիպասանը, բառարանային գրանցում ունի՞ արդյոք: Առ այսօր՝ ոչ: «Արդի հայերենի բացատրական բառարանում» գրանցվել են **փրանցուզ, ֆրանցուզ / ֆրանցուս** բա-

79 **Աբովյան Խ.**, Վերջ Հայաստանի, Որբ հայրենասիրի, Եր., 2004, էջ 65:

80 Սույն տեղում, էջ 141:

81 Սույն տեղում, էջ 136:

82 Տե՛ս **Թումանյան Հովհ.**, Մեր նախորդ շրջանի բանաստեղծները, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 8, Եր., 1999, էջ 26:

83 **Րաֆֆի**, Երկերի ժողովածու, հատ. 3, Եր., 1984, էջ 30:

ները, որոնք հղվում են **Ֆրանսիացիներ**-ին, և **Ֆրանցուզնակ** «ֆրանսիացու պես» երկարժեք բառը (միայն վերջինս՝ *գլոռ. նշումով*)<sup>84</sup>: Հատկապես առաջին երեք բառային միավորների առկայության պարագայում սպասելի էր Խ. Աբովյանի գործածած **Ֆռանցուզերէն** և Ռաֆֆու լեզվում վկայված **փրանցուզերէն** տարբերակների արձանագրումը: Մեր կարծիքով՝ ավելի սկզբունքային է ակադեմիական բացատրական բառարանի<sup>85</sup> մոտեցումը, որը նշված բառերից ոչ մեկը չի ներմուծել բառացանկ: Քննարկվող տարբերակները կարող են գետնեղվել հայերենի՝ տարածամանակյա մոտեցման հիման վրա կազմված լեզվանունների ամբողջական ցանկում: Հասկանալի է, որ դրանք ինքնըստինքյան պիտի արձանագրվեն գրողների լեզվի բառարաններում և համարարբառներում:

## ՖՐԱՆՍԻԱՐԵՆ

Լեզվանվան այս տարբերակը կարող ենք անվանել հյուսիսափայլյան, քանի որ առաջին գործածողները եղել են «Հյուսիսափայլի» խմբագիր Ստ. Նազարյանցը և հանդեսի ամենագործուն հեղինակ Մ. Նալբանդյանը: Ժամանակագրորեն առաջին վկայությունը կապվում է Ստ. Նազարյանցի անվան հետ. «Որովհետեւ դաստիարակիչ կինը խօսում էր միայն **Ֆրանսիարէն**», «Նմանապէս նորա ժամանակ անցուցանելու գրքերը էին **Ֆրանսիարէն**»<sup>86</sup>:

Մ. Նալբանդյանի խոսքում լեզվանունն ավելի շատ է հանդիպում: Այսպես. «...այժմեան Հայոց ազգի դրութիւնը հրատարակեմ բովանդակ աշխարհի մէջ Հայերէն, Ռուսերէն, Գերմաներէն, **Ֆրանսիարէն** եւ Լատիներէն», «Ամբոսիոս եւ Խորէն վարդապետքը պարապում են այժմ **Ֆրանսիարէնից** հայերէն, հայերէնից **Ֆրանսիարէն** ընդարձակ բառարանների վերայ», «Ուշ է զարթել այս ծերունու մէջ գրելու ցանկութիւնը, եւ Եղիշէն իւր խորին ծերութեան մէջ **Ֆրանսիարէն** տպելով՝ ձեռք է զարկել հրատարակելու մի այլ գիրք», «Ազգային չենք ձանաչում այն դպրոցը, ուր հրամայում է խօսել Ռուսերէն, **Ֆրանսիա-**

84 Տե՛ս Աղայան Է., նշվ. աշխ., էջ 1540, 1609:

85 Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հատ. 4, Եր., 1980:

86 **Նազարեանց Ստ.**, Հանդէս նոր հայախօսութեան, երկրորդ մասն, Մոսկվա, 1857, էջ 434:

րէն, սակաւ երբեմն՝ Հայերէն»<sup>87</sup>, «...լաւ որ Մարիամը տանն էր, որ կարողացաւ **Ֆրանսիարէն** խօսել», «...հազարաւոր **Ֆրանսիարէն** չիմացող տուներից ուղղակի մի տուն մտնել, ուր խօսում էին այդ լեզուով»<sup>88</sup>:

Հարկ է նկատել, որ Մ. Նալբանդյանը լեզվանվան այս տարբերակն է գործածել նաև անձնական նամակագրության մեջ. «Հարկ չկա ասել, որ **Ֆրանսիարեն** կուսանիմ որպէս ֆրանսիացի» (Գր. Սալթիկյանին, 18.11.1859)<sup>89</sup>: Սա նշանակում է, որ Մ. Նալբանդյանի համար **Ֆրանսիարեն**-ն էր միակ ընդունելի տարբերակը թե՛ հրապարակային և թե՛ անձնական տիրույթներում:

Մ. Նալբանդյանի խոսքում միայն մեկ անգամ պատահում է **Ֆրանսերեն** տարբերակը. «...**Ֆրանսերեն** վերջավորությանց ուժն ունի»<sup>90</sup>: Սակայն հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ գրախոսությունը գրվել է 1863 թ. (ինքնագիրը չի պահպանվել)<sup>91</sup>, լույս է ընծայվել հեղինակի մահից շատ տարիներ անց՝ 1890 թ., երբ շրջանառության մեջ էր **Ֆրանսերէն** տարբերակը: Համոզված ենք, որ Նալբանդյանը գրել է **Ֆրանսիերէն**: Դրա օգտին է վկայում նրա գործածած **Ֆրանսեագէտ** բառը, որում **Ֆրանսիարէն**-ի ի բաղադրիչը հնչյունափոխվել է **ե**-ի. «...ոգին բուն հայկական է և կատարելապէս ազատ այն եկամուտ ձևերից, որ Ռուսիայում, շատ ռուսագէտ հեղինակների և մանաւանդ – Տաճկաստանի **Ֆրանսեագէտ** հայ հեղինակների գրուածքի մէջ վխտում են»<sup>92</sup>:

Համանման է հետևյալ դեպքը: «Թափառական հրէայ» վեպի հայերեն թարգմանության «Յառաջաբան»-ում Մ. Նալբանդյանը գրել է. «Ազգայիններից, որ ծանօթ էին **Ֆրանսիարէն**, Գերմաներէն եւ Ռուսերէն լեզուներին, արդէն կարդացած կը լինին «Թափառական Հրէայ» վիպասանութիւնը»: Ակադեմիական հրատարակության մեջ լեզվանունը դարձել է **Ֆրանսերեն**<sup>93</sup>: Բնագրային փոփոխությունը

87 Նալբանդեան Մ., Յիշատակարան Կոմս Էմմանուէլի օրագրութեան թերթերից, «Հիւսիսափայլ», Մոսկվա, 1858, ամսատետրակ 4, էջ 340, 1859, ամսատետրակ 9, էջ 735-736, 1860, ամսատետրակ 5, էջ 379:

88 Նալբանդեան Մ., Մեռելախարցուկ, «Հիւսիսափայլ», Մոսկվա, 1859, ամսատետրակ 9, էջ 689-690:

89 Նալբանդյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, հատ. 5, Եր., 1984, էջ 89:

90 Նալբանդեան Մ., Մատենախօսութիւն. Սօս եւ Վարդիթեր. Վէպ Պերճ Պոռշեանցի, «Հանդէս գրականական և պատմական», Մոսկվա, 1890, երրորդ գիրք, էջ 338:

91 Տե՛ս Նալբանդյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, Եր., 1983, էջ 489:

92 Նալբանդեան Մ., Մատենախօսութիւն. Սօս եւ Վարդիթեր. Վէպ Պերճ Պոռշեանցի, էջ 331:

93 Տե՛ս «Թափառական Հրէայ, գործ Եւժեն Սիւ Ֆրանսիացու», հատ. I, Մոսկվա, 1857, էջ I-XIV, Նալբանդյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, Եր., 1980, էջ 78:

ձիշտ չէ նաև այն առումով, որ լեզվանվան կիրառության ժամանակաշրջանի սահմաններն է խախտում, ինչպես նաև բառի գործածության անմիօրինակություն վերագրում հեղինակին: Մ. Նալբանդյանը, փաստորեն, հետևողականորեն գործածել է միայն **Ֆրանսիարէն** տարբերակը:

Բաֆֆու (Հակոբ Մելիք-Հակոբյան)՝ «Հյուսիսափայլում» տպված նամակներից մեկում ևս գործածվել է հիշյալ տարբերակը. «...թարգմանչի պաշտօն է տալիս այնպիսիներին, որք գիտէին մասնաւոր **Ֆրանսիարէն**, անգլիարէն կամ գերմաներէն և այլն»<sup>94</sup>:

«Հյուսիսափայլում» այս տարբերակը գործածել են ուրիշները ևս, օրինակ՝ «Երկու երեք ամիս առաջ դպրոց մտած գիւղացի աշակերտքը անանկ յաջող **Ֆրանսիարէն** կը խօսեն որ գՓարիզցի մը կրնան ամնչցունել»<sup>95</sup>:

«Հյուսիսափայլից» բացի՝ լեզվանվան այս տարբերակը հանդիպում է արևելահայ այլ պարբերականներում ևս: Թիֆլիսի «Մշակ» շաբաթաթերթի ձակատային մասում, օրինակ, տպված է. «Յայտարարութիւններ տպվում են Հայերէն, Ռուսերէն, Վրացերէն, **Ֆրանսիարէն**, Գերմաներէն և Թուրքերէն» (15.02.1873):

Արևմտահայ իրականության մեջ **Ֆրանսիարէն** տարբերակը չի հանդիպում, իսկ Մխիթարյան միաբանության անդամ հեղինակները, ինչպես տեսանք, նախընտրում էին **փռանկերէն**-ը, **գաղղիերէն** / **գալլիերէն**-ը կամ դրանց արմատներով կազմված բառակապակցությունները:

**Ֆրանսիարէն** տարբերակը բառարաններում չի գրանցվել:

## ՖՐԱՆՍԵՐԵՆ

Միջին հայերենից վկայված ունենք **Ֆրանսէզ** «ֆրանսիացի» փոխառյալ բառը (ածականի և գոյականի արժեքներով)<sup>96</sup>: Գրվել է նաև **ֆռանցես**, **ֆրանսըզ**<sup>97</sup>:

94 «Արգոյ բարեկամ, Յովհաննէս Քաթանեանց», «Հիսիսափայլ», Մոսկվա, 1861, ամսատետրակ 11, էջ 397: Հետագա հրատարակություններում լեզվանունը արդիականացվել է՝ **ֆրանսերեն** (տես **Բաֆֆի**, Երկերի ժողովածու, հատ. 9, Եր., 1955, էջ 27, հատ. 10, էջ 75):

95 **Սուլթանշահ Ա.**, Հայոց ազգի լուսաւորիչքը, «Հիսիսափայլ», Մոսկվա, 1859, ամսատետրակ 10, էջ 785:

96 Տես **Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 834:

**Ֆրանսիացի** բառի տեղանիշ վերջածանցի կրճատմամբ, **ի**-ի անկմամբ և **-երեն** ածանցի միացմամբ կազմվել է **Ֆրանսերեն** բառը: Արևմտահայերենում լեզվանունը կազմվել է առանց բառակազմական երկրորդ քայլի, այսպես՝ **Ֆրանսա** – **Ֆրանսացի** – **Ֆրանսերէն**: Բառի կազմության ընթացքն օրինաչափական է. հմնտ. **Իտալիա** – **իտալացի** – **իտալերեն**, **Գերմանիա** – **գերմանացի** – **գերմաներեն**, **Իսպանիա** – **իսպանացի** – **իսպաներեն**: Այսպես երկար կարող ենք շարունակել:

**Ֆրանսերեն**-ն այժմ Ֆրանսիայի պետական լեզուն անվանող համահայերենյան միակ անունն է, համագործածական բառ է:

Ե՞րբ է գործածության մեջ մտել այժմ ընդունված **Ֆրանսերեն** լեզվանունը: Նոր բառերի մի բառարանում նշվում է 1885 թվականը՝ հիմք ընդունելով Արփիար Արփիարյանի հետևյալ նախադասությունը. «Ես ալ, ըսավ Արամ ցած ձայնով և **Ֆրանսերեն**, եթե հաղթեմ, սիրտդ կ'ուզեմ»<sup>98</sup>:

Բառի ավելի վաղ բազմաթիվ գործածություններ մերժում են այդ թվականը: Հմնտ. «...արդեօք կամենում է որ Աւգերեանի **Ֆրանսերէն** կամ Անգղիարէն թերակատար բառգիրքներով սովորինք գրաբառ խօսիլն ու գրելը» (1862 թ.)<sup>99</sup>:

Հատկապես գրավոր խոսքում **Ֆրանսերեն**-ին զուգահեռ շարունակում էր գործածվել **գաղղիերեն**-ը, ընդ որում՝ նույն հեղինակի խոսքում կամ պարբերականի էջերում: Հմնտ. «...ասկե վերջը ըլլալիք ատենաբանությանց հայերենն ալ պիտի կարդացվի **գաղղիերեն** չգիտցողների համար» («Գաղղիերեն լեզվով հայերեն ատենաբանություն», «Մեղու», 1872 թ. նոյեմբերի 29)<sup>100</sup>:

XIX դ. սկզբից մինչև XX դ. կեսերը երեք տասնյակից ավելի հայերեն թարգմանական բառարաններ են տպագրվել, որոնք ֆրանսերենին են առնչվում, և մեծ մասի (մասնավորապես՝ վենետիկյան հրատարակությունների) վերնագրում գործածված է **գաղղիերեն** լեզվանունը<sup>101</sup>: Դարավերջին տպագրվում են Մ. Նուպարյանի «Բառարան ֆրանսերէնէ Հայ-աշխարհիկ» (Կ. Պոլիս, 1892) և Ե. Տեմիրձիպաշյանի

97 Տե՛ս Հ. Հաքրիէ Լևտիթեան, հ. Խաչատուր Սիրովեան, հ. Մկրտիչ Ազգեան, նշվ. աշխ., էջ 1037, Հ. Մանուէ վրդ. Ջախջախեան, նշվ. աշխ., էջ 1499:

98 Նավոյան Ռ., նշվ. աշխ., էջ 303:

99 Սղարեցյան Մ., Բառարանական, «Կռունկ Հայոց աշխարհին», Թիֆլիս, 1862, N ժԱ, էջ 891:

100 Պարոնյան Հ., Երկերի ժողովածու, հատ. 8, Եր., 1972, էջ 122, 485:

101 Տե՛ս Վասպարյան Գ., Հայ բառարանագրության պատմություն, Եր., 1968, էջ 485-527:

«Բառարան ֆրանսերէնէ հայերէն» (Կ. Պոլիս, 1896) բառարանները: XX դ. սկզբից ավելի հաճախ գործածվում է **ֆրանսերէն** լեզվանունը, ինչպես՝ Ն. Տաղավարեան, «Բառացուցակ արևմտաեւրոպացի լեզուներից յայտնիների համար» (Կ. Պոլիս, 1900), կամ կրճատված՝ **ֆրանսահայ** տարբերակը (այսինքն՝ ֆրանսերէն-հայերէն), ինչպես՝ Գ. Լուսինեան, «Նոր բառգիրք պատկերազարդ ֆրանսահայ» (Փարիզ, 1900): **Ֆրանսահայ**-ը յուրահատուկ հատվածական բաղադրություն է<sup>102</sup>:

Հատկապես արևմտահայ իրականության մեջ XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին հանդիպում է **n**-ով ուղղագրական տարբերակը՝ **ֆռանսերէն**: Եռալեզու բառարաններից մեկի վերնագրում այն երևում է **ֆռանս**. համառոտագրությամբ, բայց առաջաբանի առաջին բառը լեզվանունն է՝ ամբողջական գրությամբ. «**Ֆռանսերէն** նոր ուսանող պատանեկաց»<sup>103</sup>:

Մասնավորապես Ե. Տեմիրճիպաշյանի լեզվում. «Մեր բարձր դասերն, որք **ֆռանսերէն** լեզուաւ կ'ուսանին բնութեան ու մարդկութեան պատմութիւնն, նոյն ֆռանսական լեզուն խօսող ազգին կը յարին լիովին» («Գրական նիշեր ու նկարներ», «Պատերազմ ընդդէմ Ֆռանսայի»), «**Ֆռանսերէն** ամէն բառարանի մէջ չի գտնուիր այս բառն՝ իբրեւ անմատոյց բառ» («Աղջկան մը օրագիրը»), «Դրան առջեւ երկու Հայք **ֆռանսերէն** կը խօսէին» («Մայիսի շրջագայութիւնք ու շաղակրատութիւնք»), նաև՝ «...կարդալով այս ֆրանսախառն հատուածը ու դէռ միւս **ֆռանսերէն** բառերն (euphemisme, internationaliste, digression) որք յօդուածին ամբողջութեան մէջ կը տեսնուին բնիկ հայ բառերու պէս հողովուած» (Ռ. Հ. Պերպերյան, «Դպրոց և դպրութիւն», հրատարակվել է 1907 թ.)<sup>104</sup> և այլն: Ե. Տեմիրճիպաշյանի վերոհիշյալ բառարանի առաջաբանում ևս գործածված է **n**-ով տարբերակը («**Ֆռանսերէնն** իր տիեզերականութիւնը կորսնցնելէ հեռու...»)<sup>105</sup>, թեև տիտղոսաթերթին **p**-ով է: **Ռ**-ով տարբերակը երբևէ կանոնական չի համարվել:

102 Տե՛ս **Գյուրջիյան Ղ.**, «Հայերէն» նշանակող *հայ* վերջնաբաղադրիչով բառերի մի խմբի քննություն, «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., «Գիտություն», 2017, էջ 53-67:

103 **Արամեան Ճ.**, նշվ. աշխ., էջ Թ:

104 Ըստ «Հայ մատենագրության թուանշային գրադարանի» ընձեռած նյութի (<https://www.digilib.am/>):

105 **Տեմիրճիպաշյան Ե.**, Բառարան ֆրանսերէնէ հայերէն, Կ. Պոլիս, 1896, էջ Ա:

Ստ. Մալխասյանցի բացատրական առաջին ընդարձակ բառարանն է, որ գրանցել է **Ֆրանսերէն** լեզվանունը. նշվել են մակբայի, ածականի և գոյականի արժեքներ, բերվել ինքնաշեն օրինակներ<sup>106</sup>: Դրանից հետո **Ֆրանսերեն / Ֆրանսերէն** լեզվանունը մշտապես ներառվել է հայերենի հայաստանյան և սփյուռքյան միալեզվյան և թարգմանական քիչ թե շատ ծավալուն բառարաններում (բացառությամբ է բեյրության երկհատորյա բացատրական բառարանը, որում, ինչպես նշել ենք, կա միայն **գաղղիերէն** տարբերակը):

Այսպիսով՝ հայերենում ֆրանսիացիների լեզվի՝ **Ֆռանկերէն**-ից սկիզբ առած շուրջ հինգհարյուրամյա պատմական ընթացքը միջանկյալ տարբեր հանգրվաններով հանգեցրեց **Ֆրանսերէն / Ֆրանսերեն** լեզվանվան ստեղծմանը և հաստատմանը:

### Եզրակացություններ

1. Ֆրանսիացիների լեզուն անվանելու համար հայերենում օգտագործվել են ֆրանսիական ժողովրդի ձևավորմանը մասնակցած ցեղերի անուններ (**Ֆրանկ, գալլ**), երկրի և ժողովրդի անունները (**Ֆրանսիա, Ֆրանսիացի**), դրանց զանազան տարբերակները: Կազմվել և շրջանառության մեջ են եղել բառով արտահայտված **Ֆռանկերէն / Ֆռանգերէն, փռանկերէն, Ֆրանցուզերեն / Ֆռանցուզերեն, գաղղիերէն / գալլիերէն, գաղղիարէն / գալլիարէն, Ֆրանսիարէն** տարբերակները, այժմ՝ **Ֆրանսերեն** լեզվանունը:

2. Լեզուն անվանելու համար V դարի հայերենի համանման կառույցների հետևողությամբ XIX դարում գործածվել են նաև բառակապակցություններ՝ **գաղղիական / գալլիական բարբառ / լեզու, գաղղիացի բարբառ / լեզու, փռանկաց / փռանկական / փռանկ լեզու**: Դրանք կազմվել են լեզուն անվանող բառերին զուգահեռ:

3. Բառային ձևավորում ունեցող տարբերակային լեզվանուններն ունեն մի շարք տարբերություններ.

ա) հնչյունական՝ կրկնակ **լլ/ղղ (գաղղիերէն / գալլիերէն, գաղղիարէն / գալլիարէն), ո/ր (Ֆրանցուզերեն / Ֆռանցուզերեն), ֆ/փ (Ֆռանկերէն / փռանկերէն),**

106 Տե՛ս Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հատ. 4, Եր., 1945, էջ 630:

բ) բառային (բառահիմքի)՝ **Ֆոանկերէն / Ֆրանցուզերեն / գաղղիերէն / Ֆրանսերեն,**

գ) բառակազմական՝ **-արէն/-երէն** ածանցներ (**գաղղիարէն / գաղղիերէն**), **ի** բաղադրիչի առկայություն / բացակայություն (**Ֆրանսիարէն / Ֆրանսերէն**):

4. Տարբերակների գործածության ժամանակագրական այսպիսի պատկեր կարելի է ուրվագծել. XVI դ. վերջին քառորդում վկայվել է **Ֆոանկերէն**-ը, 1611 թ.՝ **Ֆոանգերէն**-ը, XIX դ. կեսին՝ **Ֆրանցուզերեն**-ը, XIX դ. կեսերին՝ **փոանկական լեզու**-ն, XIX դ. կեսերին գործածվել են **փոանկ լեզու, փոանկաց լեզու** և **փոանկ, Ֆրանսիարէն** անվանումները, XIX դ. երկրորդ կեսին՝ **փոանկ բարբառ**, XIX դ. վերջին քառորդից մինչև XIX դ. սկզբները՝ **փոանկերէն** և նույն շրջանից առ այսօր՝ **Ֆրանսերէն** լեզվանունները:

5. Մխիթարյան միաբանության անդամ հեղինակները նախընտրում էին **գաղղիարէն / գաղղիերէն, փոանկերէն**, «Հյուսիսափայլի» հեղինակները՝ **Ֆրանսիարէն** տարբերակները:

6. Լեզվանվան տարբերակների մեծ մասը համահայերենյան բնույթ ունի (**Ֆոանկերէն, գաղղիերէն**), իսկ որոշ տարբերակներ բնորոշ են հայերենի տարբերակներից մեկին, ինչպես՝ **գալլիարէն**-ը՝ արևմտահայերենին, **Ֆրանցուզերեն / Ֆոանցուզերեն**-ը՝ արևելահայերենին: Հայերենի երկու ճյուղերում տարբերակայությունը վերացված է. ներկայումս կիրառվում է միևնույն լեզվանունը՝ **Ֆրանսերեն / Ֆրանսերէն**:

7. Միջինհայերենյան **Ֆոանկերէն**-ից մինչև այժմյան **Ֆրանսերեն** ուղին լեզվանվան ընդունելի տարբերակի փնտրտուքի, ընդունման, կայունացման և կանոնարկման դարավոր ընթացք է, որի ժամանակ լեզուն հնչյունական ձևավորման պարզեցման միջոցով հանգել է լավագույն տարբերակին:

8. Հայերենի տարբեր բառարաններում գլխաբառ են դարձել (առնվազն մեկ անգամ) բառային ձևավորում ունեցող տարբերակային լեզվանունները՝ բացառությամբ **Ֆրանցուզերեն / Ֆոանցուզերեն**-ի և **Ֆրանսիարէն**-ի:

**Դավիթ Ս. Գյուրջիյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայոց լեզվի բառակազմությունը և բառակազմական



ինաստաբանությունը, բառարանագրությունը և բառարանագիտությունը, խոսքարվեստը, հայերենի ուսուցման հարցերը: Հեղինակ (և համահեղինակ) է դպրոցական և համալսարանական բազմաթիվ դասագրքերի ու ձեռնարկների, բառարանների, ուսումնական, մեթոդական, գիտահանրամատչելի գրքերի և 80-ից ավելի գիտական հոդվածների:

Էլ. հասցե՝ gyurjidav@mail.ru

Summary

## HISTORICAL DEVELOPMENT OF THE ARMENIAN NAME OF THE FRENCH LANGUAGE

Davit S. Gyurjinyan

*Candidate of Sciences in Philology*

**Keywords** - name of the language, variability, historical lexicology, vocabulary change, standardization, word-formation regularity, lexicographic tradition, գաղղիերեն "language of the inhabitants of Gaul (France)", փռանկերեն "language of the Franks (French people)", ֆրանսիարեն "language of France", ֆրանսերեն "the French language".

To designate the concept of the "French language" in Armenian, words formed on the basis of the names of the tribes that took part in the formation of the French people (Franks, Gauls), the names of the country and nation (France, French) and their variants were used. There were a number of language names in use with different variants: **Ֆռանկերէն / Ֆռանգերէն / փռանկերէն** "Language of the Franks (French people)", **Ֆրանցուզերէն / ֆռանցուզերէն** "French language", **գաղղիերէն / գալլիերէն, գաղղիարէն / գալլիարէն** "language of the inhabitants of Gaul (France)", **ֆրանսիարէն** "language of France", currently both versions of the Armenian language adopted a single name - **ֆրանսերէն** "French language".

Variants of the name of the language differ in phonetic and derivational features: double sounds (գաղղիերէն / գալլիերէն), various sounds at the beginning and in the middle of the word (**Ֆռանկերէն** /

փռանկերէն, ֆրանցուզերեն / ֆռանցուզերեն), variable suffixes –  
**արէն / -երէն**, denoting "language" (գաղղի**արէն** / գաղղի**երէն**), lexical  
foundations: **ֆռանկերէն** (Frank), **գաղղիերէն** (Gaul), **ֆրանսերեն**  
(Frank), etc. Most of the options have a pan-Armenian character.

In the 19<sup>th</sup> century, by analogy with the corresponding structures of the  
Armenian language of the 5<sup>th</sup> century, synonymous phrases were created  
that were used in parallel with lexical names: **գաղղիական /**  
**գալլիական բարբառ / լեզու** "Gallic/Gaulish speech (language)",  
**փռանկաց / փռանկական լեզու** "Frank language, language of Franks".

The chronology of the use of variants presents the following picture:  
the last quarter of the 16<sup>th</sup> century - **ֆռանկերէն** (the first Armenian name  
of the French language), 1611 - **ֆռանգերէն**, the middle of the 19<sup>th</sup>  
century - **փռանկական լեզու** (in the Western Armenian),  
**ֆրանսիարէն, ֆրանցուզերեն** (in the Eastern Armenian), the last  
quarter of the 19<sup>th</sup> century - before the 20<sup>th</sup> century - **փռանկերէն**. Now the  
variability of the Armenian name of the French language has been  
eliminated.

From the Middle Armenian **ֆռանկերէն** to the modern French  
**ֆրանսերեն**, it has been a centuries-old process of finding an acceptable  
name for the French language, its adoption and standardization.

## ИСТОРИЧЕСКОЕ РАЗВИТИЕ НАЗВАНИЯ ФРАНЦУЗСКОГО ЯЗЫКА В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Давид С. Гюрджинян

*Канд. филол. наук*

**Ключевые слова** - название языка, вариативность, историческая лексикология, изменение лексики, стандартизация, словообразовательная закономерность, лексикографическая традиция, գաղղիերեն – «язык жителей Галлии (Франции)», փռանկերեն – «язык франков (французов)», ֆրանսիարեն – «язык Франции», ֆրանսերեն – «французский язык».

Для обозначения понятия «французский язык» в армянском языке использовались слова, образованные от названия племен, из которых сформировался французский народ (франки, галлы), от названия страны и нации (Франция, француз) и их вариантов. Употреблялось несколько вариантов названий языка: ֆռանկերեն / ֆռանգերեն / փռանկերեն – «язык франков (французов)», ֆրանցուգերեն / ֆռանցուգերեն – «французский язык», գաղղիերեն / գալլիերեն, գաղղիարեն / գալլիарեն – «язык жителей Галлии (Франции)», ֆրանսիարեն – «язык Франции», в настоящее время в двух ветвях армянского языка – восточно-армянском и западно-армянском языках – принято единое название – ֆրանսերեն «французский язык».

Упомянутые выше варианты наименования языка отличаются фонетическими и словообразовательными особенностями: двойными звуками (գաղղիերեն / գալլիերեն), различными звуками в начале и в середине слова (ֆռանկերեն / փռանկերեն, ֆրանցուգերեն / ֆռանցուգերեն), вариативными суффиксами **-արեն / -երեն**, обозначающими «язык» (գաղղիարեն / գաղղիերեն), лексическими основами: ֆռանկերեն (франк), գաղղիերեն (галл), ֆրանսերեն (франс) и т.д. Большинство вариантов имеет общеармянский характер.

В XIX веке, по аналогии с соответствующими конструкциями в армянском языке V века, были созданы синонимичные словосочетания, которые употреблялись параллельно лексическим названиям: **գաղղիական / գալլիական բարբառ / լեզու** – «галлийская речь (диалект, язык)», **փռանկաց / փռանկական լեզու** – «язык франков, франкский язык».

Хронология использования вариантов рассматриваемых наименований представляет следующую картину: последняя четверть XVI века – **Ֆռանկերէն** (первое армянское название языка французов), 1611 г. – **Ֆռանգերէն**, середина XIX в. – **փռանկական լեզու** (в западноармянском языке), **Ֆրանսիարէն**, **Ֆրանցուզերեն** (в восточноармянском языке), с последней четверти XIX до начала XX в. – **փռանկերէն**. Ныне вариативность армянского названия французского языка устранена.

От среднеармянского **փռանկերէն** до современного **Ֆրանսերեն** – это многовековой процесс поиска приемлемого названия французского языка, его принятия и стандартизации.

## REFERENCES

1. [H. Gëorg Payean], Baṙaran hayerēn-gaghghierēn, hat. A, Venetik, S. Ghazar, 1926, 1148 էջ (In Armenian).
2. “Bazmavēp”, Venetik, 1861, N 1, էջ 5-18 (In Armenian).
3. “Hamaṙōt patmut’iwn meghuats’”, “Azdarar”, Madras, 1796, N 17, էջ 60-63 (In Armenian).
4. “Haykakan sovetakan hanragitaran”, hat. 12, Yer., “Haykakan sovetakan hanragitaran” glkhavor khmbagrut’yun, 1986, 752 էջ (In Armenian).
5. “K’aghak’akan ashkharhagrut’iwn”, hawak’eats’ h. Ghewond Marg. Alishanean, Venetik, S. Ghazar, 1853, 801 էջ (In Armenian).
6. “Labubneay diwanagir dpri Yedesioy T’ught’ Abgaru, yegheal yasorwoyn I dzeṙn s. t’argmanch’ats’”, Venetik, 1868, 86 էջ (In Armenian).
7. “Mijin dareri patmut’yun”, S. D. Skazkini yev aylots’ khmbagrut’yamb, hat. 1, Yer., Yerevani hamalsarani hrat., 1975, 824 էջ (In Armenian).
8. “Mshak”, T’iflis, 15.02.1873 (In Armenian).
9. “Patmut’iwn P’arēzi yev Vennayi: Patmut’iwn Venetik k’aghak’in”, ashkhatasirut’yamb K. A. Melik’-Ōhanjanyani, Yer., Haykakan SSH GA hrat., 1966, 306 էջ (In Armenian).
10. “Psak”, Yer., 17.07.1882 (In Armenian).
11. “Zhamanakakits’ hayots’ lezvi bats’atrankan baṙaran”, hat. 4, Yer., Haykakan SSH gitut’yunneri akademiayi hrat., 1980, 828 էջ (In Armenian).
12. Abovean Kh., Vērk’ Hayastani, Voghb hayrenasiri, Yer., Grakanut’yan yev arvesti t’angarani hrat., 2004, 424 էջ (In Armenian).

13. **Abrahamyan A.**, Hamaṛot urvagits hay gaghṭ'avayreri patmut'yan, Yer., 1964, 487 էջ (**In Armenian**).
14. **Achaṛyan H.**, Hayots' lezvi patmut'yun, II mas, Yer., Haypethrat, 1951, 610 էջ (**In Armenian**).
15. **Aghabegyan M.**, Baṛak'nnakan, "Kṛunk Hayots' ashkharhin", T'iflis, 1862, N ZHA, էջ 883-896 (**In Armenian**).
16. **Aghayan Ē.**, Ardi hayereni bats'atrankan baṛaran, Yer., "Hayastan", 1976, 1642 էջ (**In Armenian**).
17. **Alishan Gh.** [t'argm.], Abusahl Hay, Patmut'iwn yekeghets'eats' yev vanoreits' Yegiptosi, Venetik, S. Ghazar, 1895, 82 էջ (**In Armenian**).
18. **Alishan Gh.**, Arshaloys k'ristonēut'ean Hayots', Venetik, S. Ghazar, 1901, 398 էջ (**In Armenian**).
19. **Alishan Gh.**, Hayapatum. Patmich'k' yev patmut'iwnk' Hayots', hat. A, Venetik, S. Ghazar, 1901, 560 էջ (**In Armenian**).
20. **Alishan Gh.**, Haybusak kam haykakan busabaṛut'iwn, Venetik, S. Ghazar, 1895, 760 էջ (**In Armenian**).
21. **Alishan Gh.**, Hay-Venet kam yarēnch'ut'iwnk' hayots' yev venetats', Venetik, S. Ghazar, 1896, 556 էջ (**In Armenian**).
22. **Alishan Gh.**, Shnorhali yew paragay iwr, Venetik, S. Ghazar, 1873, 840 էջ (**In Armenian**).
23. **Alishan Gh.**, Sisuan. Hamagrut'iwn haykakan Kilikioy. Lewon Metsagorts, Venetik, S. Ghazar, 1885, 592 էջ (**In Armenian**).
24. **Ant'imosean A. vrd.**, K'erakanut'iwn gaghghiakan, Venetik, S. Ghazar, 1821, 608 էջ (**In Armenian**).
25. **Aramean Ye.**, Hamaṛōtagoyn baṛaran ardean hayerēn I tach. yew I frans., P'ariz, tp. Aramean, 1860, 178 էջ (**In Armenian**).
26. **Babikeants' A. vrd.**, Hamaṛot k'erakanut'iwn gaghghiakan lezui. awandea I hay barbaṛ handerdz tachkakan t'argmanut'eamb, Vienna, Mkhit'arean tp., 1816, 248 էջ (**In Armenian**).
27. **Bagraturi Arsēn Komitas**, Hayerēn k'erakanut'iwn I pēts zargats'elots', Venetik, S. Ghazar, 1852, 772 էջ (**In Armenian**).
28. **Barlezizyan A.**, Hayeren-franseren baṛaran, Yer., YEPH hrat., 2009, 976 էջ (**In Armenian**).
29. **Barseghyan H.**, Hayeren ughghagrakan-ughghakhosakan-terminabanakan baṛaran, Yer., "Luys", 1973, 980 էջ (**In Armenian**).
30. **Chemchemean S. vrd.**, Mayr ts'uts'ak hayerēn dzeragrats' matenadaranin Mkhit'arean I Venetik, hat. D, Venetik, 1993, 1234 էջ (**In Armenian**).
31. **Chērēchean G. ark'.**, **Tonikean P'. K.**, Hayots' lezui nor baṛaran, hat. 1, Pēyruṭ, "K. Tonikean yev Vordik'" hratarakch'atun, 1992, 1306 էջ (**In Armenian**).
32. **Dvoreckij I.**, Latinsko-russkij slovar', M., "Russkij jazyk", 1976, 1096 s. (**In Russian**).
33. **Gabamachean S.**, Nor baṛagirk' hayerēn lezui, K. Pōlis, tp. R. Sagayean, 1910, 1406 էջ (**In Armenian**).
34. **Galfayean A.**, Bargirk' hay-gaghghiarēn yev gaghghiarēn-hayerēn, P'ariz, gravachaṛanots' L. Hashet'i, 1861, 1036 էջ (**In Armenian**).
35. **Gasparyan G.**, Hay baṛaranagrut'yan patmut'yun, Yer., HSSH GA hrat., 1968, 566 էջ (**In Armenian**).
36. **Ghazaryan R., Avetisyan H.**, Mijin hayereni baṛaran, 2-rd barep'okhvats hrat., Yer., YEPH hrat., 2009, 836 էջ (**In Armenian**).
37. **Ghazaryan R.**, Mijin grakan hayereni baṛapashaṛē, Yer., Yerevani hamalsarani hrat., 2001, 226 էջ (**In Armenian**).
38. **Gyurjinyan D.**, "Hayeren" nshanakogh hay verjnabaghadrich'ov baṛeri mi khmbi k'nnut'yun, "Jahukyanakan ēnt'erts'umner" mijazgayin gitazhoghovi zekuts'umneri zhoghovatsu, Yer., "Gitut'yun", 2017, 389 էջ (**In Armenian**).

39. **Gyurjinyan D.**, Angleren lezvanvan patmakan zargats‘umě hayerenum, “Patmabanasirakan handes”, Yer., 2022, N 2, ěj 169-187 **(In Armenian)**.
40. **Gyurjinyan D.**, Arameats‘ineri lezvi hayeren anuně, “Hayagitakan handes”, Yer., 2021, N 3, ěj 3-17 **(In Armenian)**.
41. **Gyurjinyan D.**, Balt‘iakan lezneri hayeren anunneri tarberakaynut‘yan masin, “Lraber” has. git., Yer., 2021, N 2, ěj 217-239 **(In Armenian)**.
42. **Gyurjinyan D.**, Hndkakan lezneri anunnerě hayerenum. gortsatsut‘yan, kanonarkman yev bařaranayin mshakman harts‘er, “Hay bařaranagrut‘yan ardi khndirnern u herankarnerě”, Mijazgayin gitazhoghovi nyut‘er, Yer., “K‘op‘i Print”, 2021, 192 ěj **(In Armenian)**.
43. **Gyurjinyan D.**, Hreaneri lezvi hayeren anunnerě yev drants‘ tarberaknerě, “Hayagitakan handes”, Yer., 2021, N 4, ěj 3-17 **(In Armenian)**.
44. **Gyurjinyan D.**, Hreaneri lezvi hayeren anunneri yev drants‘ tarberakneri bařaranayin mshakman patmut‘yuně, “Banber hayagitut‘yan”, Yer., 2021, N 3, ěj 216-231 **(In Armenian)**.
45. **H. Gabriěl Awetik‘ean, h. Khach‘atur Siwrmėlean, h. Mkrtich‘ Awgerean**, Nor bařgirk‘ haykazean lezui, hat. B, Venetik, S. Ghazar, 1837, 1067 ěj **(In Armenian)**.
46. **Jakhjakhean M. vrd.**, Bařgirk‘ I barbař hay yew italakan, Venetik, S. Ghazar, 1837, 1508 ěj **(In Armenian)**.
47. **Kirakosi vardapeti Gandzakets‘woy**, Hamařōt patmut‘iwn I srboyn Grigorė ts‘awurs iwr lusabaneal, Venetik, S. Ghazar, 1865, 265 ěj **(In Armenian)**.
48. **Křanean A. vrd.**, Bařgirk‘ hayerėn lezui, Pėyruť, “Shirak”, 1970, 512 ěj **(In Armenian)**.
49. **Lusinean G.**, Nor bařgirk‘ patkerazard fransahay, hat. A, P‘ariz, tp. “Moris hay yew vordi”, 1900, 817 ěj **(In Armenian)**.
50. **Malkhaseants‘ St.**, Hayerėn bats‘atrakan bařaran, hat. 4, Yer., Haykakan SSR petakan hrat., 1945, 648 ěj **(In Armenian)**.
51. **Movses Khorenats‘i**, Patmut‘yun Hayots‘, K‘nnakan bnagirě yew neratsut‘iwně M. Abegheani yew S. Yaruť‘iwneani, Yer., Haykakan KhSH GA hrat., 1991, 486 ěj **(In Armenian)**.
52. **Muradyan H.**, Hayots‘ lezvi patmakan k‘erakanut‘yun, hat. 1. Hnch‘yunabanut‘yun, Yer., Hayk. SSH GA hrat., 1982, 348 ěj **(In Armenian)**.
53. **Muradyan H.**, Hnch‘yunabanut‘yun, “Aknarkner mijin grakan hayereni patmut‘yan”, hat. A, Yer., 1972, ěj 55-164 **(In Armenian)**.
54. **Muratean Ye.**, K‘erakanut‘iwn gaghghiarėn lezui hayerėn bats‘atruť‘eamb, Yerusaghėm, tp. Ařak‘elakan at‘ořoy S. Yakobeants‘, 1869, 120 ěj **(In Armenian)**.
55. **Nalbandean M.**, Matenakhōsut‘iwn. Sos yew Vardit‘er. Vėp Perch Přosheants‘i, “Handės grakan yev patmakan”, Moskva, 1890, yerrord girk‘, ěj 322-352 **(In Armenian)**.
56. **Nalbandean M.**, Merelaharts‘uk, “Hiwsisap‘ayl”, Moskva, 1859, amsatetrak 9, ěj 665-708 **(In Armenian)**.
57. **Nalbandean M.**, Yishatakaran Koms Ĕmmanuėli ōragrut‘ean t‘ert‘erits‘, “Hiwsisap‘ayl”, Moskva, 1858, amsatetrak 4, ěj 338-344, 1859, amsatetrak 9, ěj 725-750, 1860, amsatetrak 5, ěj 378-396 **(In Armenian)**.
58. **Nalbandyan M.**, Yerkeri liakatar zhoghovatsu, hat. 2, Yer., Haykakan SSH GA hrat., 1980, 448 ěj, hat. 4, Yer., Haykakan SSH GA hrat., 1983, 556 ěj, hat. 5, Yer., Haykakan SSH GA hrat., 1984, 496 ěj **(In Armenian)**.
59. **Navoyan R.**, Aknarkner 19-rd dari 50-80-akan t‘t‘. ashkharhabaryan norakazmut‘yunneri usumnasirut‘yan: Bařaran, Yer., “Limush”, 2011, 310 ěj **(In Armenian)**.
60. **Nazareants‘ St.**, Handės nor hayakhōsut‘ean, Yerkrord masn, Moskva, Lazareants‘ tparan, 1857, 504 ěj **(In Armenian)**.

61. **Nuparean M.**, Baṛaran franseṛēnē Hay-ashkharhik, K. Polis, tp. G. Paghtatlean, 1892, 1115 ēj (**In Armenian**).
62. **Paronyan H.**, Yerkeri zhoghovatsu, hat. 2, Yer., Haykakan SSR GA hrat., 1964, 408 ēj, hat. 8, Yer., Haykakan SSR GA hrat., 1972, 552 ēj (**In Armenian**).
63. **Perperyan A.**, Patmut'yun hayots', B hrat., S. Ējmiatsin, Mayr At'or Surb Ējmiatsni hrat., 2008, 600 ēj (**In Armenian**).
64. **Petrosean M. vrd.**, Nor baṛgirk' hay-angliarēn, Venetik, S. Ghazar, 1875-79, 786 ēj (**In Armenian**).
65. **Petrosyan H., Galstyan S., Gharagyulyan T'.**, Lezvabanakan baṛaran, Yer., Haykakan SSH gitut'yunneri akademiayi hrat., 1975, 318 ēj (**In Armenian**).
66. **Raffi**, Yerkeri zhoghovatsu, hat. 2, Yer., "Sovetakan grogh", 1983, 480 ēj, hat. 3, Yer., "Sovetakan grogh", 1984, 544 ēj, hat. 10, Yer., "Nairi", 1991, 542 ēj (**In Armenian**).
67. **Sult'anshah A.**, Hayots' azgi lusaworich'k'ě, "Hiwsisap'ayl", Moskva, 1859, amsatetrak 10, ēj 772-805 (**In Armenian**).
68. **Taghavarean N.**, Baṛats'uts'ak akhtanuants' yew deghōrēits' yatkut'eants'. franseṛēnē I hay, K. Polis, tp. Y. Matt'ēosean, 1900, 24 ēj (**In Armenian**).
69. **Tayean h. Gh.**, Mayr diwan Mkhit'areants' Venetkoy I S. Ghazar 1707-1773 I tsagmanē ukhtis minch'ew ts'bazhanumn T'restean harts', Venetik, Mkhit'arean tp., 1930, ēj 371 (**In Armenian**).
70. **Tēmircipashean Ye.**, Baṛaran franseṛēnē hayerēn, K. Polis, tp. G. Paghtatlean, 1896, 938 ēj (**In Armenian**).
71. **T'umanyan Hovh.**, Yerkeri liakatar zhoghovatsu, hat. 8, Yer., HH GAA "Gitut'yun" hrat., 1999, 710 ēj (**In Armenian**).
72. **Yeaghubean K.**, Hayerēn-ruserēn baṛaran, T'iflis, tp. Y. Martiroseants'i, 1891, 464 ēj (**In Armenian**).
73. **Yeznik Koghbat's'i**, Yeghts aghandots', Yer., Yerevani hamalsarani hrat., 1994, 348 ēj (**In Armenian**).